Արա Ղազարյան
Արտակ Զեյնալյան

# ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐԱՆՔ



## Ձեռնարկ լրագրողների և փաստաբանների համար

Երևան 2014

Ձեռնարկը քայլ առ քայլ ներկայացնում է վիրավորանքի և զրպարտության գործերով մինչդատական և դատական վարույթների բոլոր ընթացակարգերը և դրանց շրջանակներում ընկած փուլերը, օրինակ, մինչև դատարան դիմելը հերքման պահանջը ներկայացնելու կարգը, հայցապահանջ ներկայացնելու ժամկետները, դատարանում ապացուցման բեռի բաշխման սկզբունքներն ու կանոնները, վնասի հատուցման պահանջ ներկայացնելը, դատաքննության փուլում մի շարք պաշտպանական համակարգերի նկարագրությունը և այլն: Առանձին բաժնով ներկայացվում են վիրավորանք և զրպարտություն հասկացությունների սահմանումները, այն չափանիշները, չափորոշիչները և սկզբունքները, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ արտահայտությունը իր բնույթով վիրավորա՞նք է, թե՞ զրպարտություն:

Ձեռնարկը հեղինակել են «Արնի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն, Տեղեկատվական վեճերի խորհրդի անդամ Արա Ղազարյանը և «Իրավունքի գերակայություն» հասարակական կազմակերպության իրավապաշտպան Արտակ Զեյնալյանը:

ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն երևանյան գրասենյակ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Այս ձեռնարկը հրատարակվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն տեղեկատվության մատչելիությանն ու տեղեկատվական վեճերի արտադատական լուծումներին Հայաստանում» ծրագրի շրջանակներում, ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ: Այստեղ արտահայտված կարծիքներն ու հետևությունները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԵԱՀԿ Երևանի գրասենյակի տեսակետները:

© Ինֆորմացիայի ազատության կենտրոն,
© Արայիկ Ղազարյան,
© Արտակ Զեյնալյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....................................................................................3

ԳԼՈՒԽ I. ՄԻՆՉԵՎ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼԸ ....................................................5

Հերքում.........................................................................................................6

Պատասխանի իրավունք ..............................................................................7

ԳԼՈՒԽ II. ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼԸ....................................................................8

Հայցային վաղեմություն.................................................................................8

Դատարան դիմելու կարգը ..........................................................................12

Նախապատրաստական փուլ ......................................................................15

Ապացուցման բեռը.......................................................................................17

Փոխհատուցման պահանջ...........................................................................27

ԳԼՈՒԽ III. ՆՅՈՒԹԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ..............................................29

Զրպարտությունը .......................................................................................29

Վիրավորանքը.............................................................................................33

Պաշտպանական համակարգեր..................................................................35

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2010թ. մայիսին վիրավորանքի և զրպարտության համար պատասխանատվության քրեական նորմերի ապաքրեականացումից հետո մեծ թվով քաղաքացիական հայցեր ներկայացվեցին դատարաններ, որոնք հիմնականում ուղղված էին լրագրողների և լրատվամիջոցների դեմ: Այդ շրջանում հայցվորները հակված էին ներկայացնել փոխհատուցման խոշոր գումարային պահանջներ, որոնց մի մասը սկզբնական շրջանում բավարարվեցին դատարանների կողմից: Թվում էր, թե պատասխանատվության ապաքրեականացումը բացասական ազդեցություն կարող էր ունենալ լրատվամիջոցների ազատության վրա: Սակայն, կարճ ժամանակ անց ՀՀ Սահմանադրական դատարանը և ՀՀ Վճռաբեկ դատարանն ընդունեցին մի շարք նախադեպային որոշումներ, որոնցում կարևոր իրավական մեկնաբանություններ ու սահմանումներ տրվեցին վիրավորանքի և զրպարտության նորմերի նյութաիրավական բովանդակության և կիրառության վերաբերյալ: Այդ մեկնաբանություններն ու սահմանումներն ընդունվեցին որպես պարտադիր նշանակություն ունեցող ուղեցույցեր և դրանք սկսեցին հետևողականորեն կիրառվել դատարանների և մյուս իրավակիրառողների կողմից: Արդյունքում, էապես նվազեցին լրատվամիջոցների ու լրագրողների դեմ բերված հայցերն ու դատական գործերը և հաստատվեց կայուն դատական պրակտիկա:

Վերը նշված զարգացումները հանգեցրեցին վիրավորանքի ու զրպարտության գործերով հարուստ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման, որի արդյունքում հարստացավ իրավունքի այս ոլորտը, ինչն էլ իր հերթին նպաստեց բազմածավալ գրականության և իրավական տեքստերի լույսընծայմանն ու տարածմանը: Ներկայումս այս ոլորտը քաղաքացիական իրավունքի ամենազարգացած ոլորտներից մեկն է: Այդուհանդերձ, նշված հանգամանքը նաև որոշակի դժվարությունների առաջ է կանգնեցրել իրավահարաբերությունների մասնակիցներին ու կիրառողներին, քանի որ մեծածավալ գրականության և տեքստերի առատության մեջ բացակայում է որևէ ձեռնարկ կամ ուղեցույց, որը ամբողջապես կհամակարգեր և մատչելի կերպով ընթերցողին կներկայացներ այդ ոլորտի ողջ տեղեկատվությունը: Այս ձեռնարկը կոչված է լրացնելու այդ բացը:

Ձեռնարկը նախատեսված է բոլոր այն անձանց համար, ում անհրաժեշտ է վիրավորանքի ու զրպարտության դատական գործերով մանրամասն ուղեցույց: Հենց այդ նպատակից ելնելով ձեռնարկը կազմվել է այնպես, որպեսզի դրանից կարողանան օգտվել ոչ միայն ոլորտի մասնագետները, այլ նաև նրանք, ովքեր հանգամանքների բերումով ստիպված են իրավական պաշտպանության եղանակներ փնտրել վիրավորական կամ զրպարտող բնույթի հրապարակային հայտարարություններից:

Ձեռնարկը քայլ առ քայլ ներկայացնում է վիրավորանքի և զրպարտության գործերով մինչդատական և դատական վարույթների բոլոր ընթացակարգերը և դրանց շրջանակներում ընկած փուլերը, օրինակ, մինչև դատարան դիմելը հերքման պահանջը ներկայացնելու կարգը, հայցապահանջ ներկայացնելու ժամկետները, դատարանում ապացուցման բեռի բաշխման սկզբունքներն ու կանոնները, վնասի հատուցման պահանջ ներկայացնելը, դատաքննության փուլում մի շարք պաշտպանական համակարգերի նկարագրությունը և այլն: Առանձին բաժնով ներկայացվում են վիրավորանք և զրպարտություն հասկացությունների սահմանումները, այն չափանիշները, չափորոշիչները և սկզբունքները, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ արտահայտությունը իր բնույթով վիրավորա՞նք է, թե՞ զրպարտություն: Որպեսզի առավել դյուրին լինի ձեռնարկի գործածումը, Բաժին I-ում ներառված է ուղեցույց, որում ընթերցողին բացատրվում է, թե գործընթացի առաջին քայլին

(հերքման պահանջով դիմելիս կամ դատական հայցը ստանալիս) որ հանգամանքների վրա պետք է ուշադրություն դարձնել, ինչ քայլերը առավել նպատակահարմար կլինի կատարել և այլն:

Ձեռնարկում լայնորեն վկայակոչված են ՀՀ տարբեր օրենսդրական ակտեր և դրույթներ, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ընդհանուր իրավասության դատարանների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերը, ինչպես նաև գիտագործնական հոդվածներ այս թեմայի վերաբերյալ: Լայնորեն հղումներ են կատարված նաև Տեղեկատվական վեճերի խորհրդի (այսուհետ՝ ՏՎԽ) որոշումների վրա: Քանի որ նախատեսված է ձեռնարկը կիրառության մեջ դնել էլեկտրոնային եղանակով, բոլոր հղումները կատարված են հիպերհղումների (hyperlinks) և էջանիշերի (bookmarks) միջոցով:

Հուսով ենք՝ ձեռնարկն օգտակար կլինի իրենց պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու կամ արտահայտվելու, տեղեկատվության ազատության իրավունքներն իրացնելու և պաշտպանելու նպատակ ունեցողների, այս երկու կատեգորիաների միջև ծագած վեճերը լուծելուն կոչված մարմինների, ինչպես նաև՝ բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների, դասախոսների համար:

# ԳԼՈՒԽ I.

## ՄԻՆՉԵՎ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼԸ

Եթե դուք գտնում եք, որ դարձել եք վիրավորանքի կամ զրպարտության զոհ և ցանկանում եք պաշտպանել ձեր արժանապատվությունը օրենքով սահմանված միջոցներով, նախևառաջ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք հայտարարությունը կատարվել է հրապարակային եղանակով: Եթե հայտարարությունը կատարվել է հրապարակային եղանակով, դուք ունեք օրենքով սահմանված պաշտպանության միջոցներ, իսկ եթե արտահայտությունը, հայտարարությունը հրապարակային եղանակով չի արվել, դուք օրենքով սահմանված պաշտպանության միջոցներ չունեք, հետևաբար՝ իրավունքի պաշտպանության դատական պաշտպանության եղանակի չեք կարող դիմել: Այս առումով առկա է իրավական բաց[1]:

Ձեր հաջորդ քայլը պետք է լինի որոշելը, թե վիճահարույց արտահայտությունը դուք համարում եք վիրավորանք, թե՞ զրպարտություն: Սա կարևոր է, քանի որ վիրավորանքը և զրպարտությունը տարբեր հասկացություններ են, հետևաբար, իրավական պաշտպանության մեխանիզմներն էլ են տարբեր: Ուստի, դրանք պետք է միմյանցից տարանջատել: Հիմնականում այս երկու հասկացությունները հեշտ է իրարից զանազանել: Զրպարտությունը, որպես կանոն, անձին որևէ **գործողության** կատարման մեջ մեղադրող հայտարարություն է (օրինակ՝ «Ա-ն գողացել է իմ դրամապանակը»), իսկ վիրավորանքը պիտակ է, որևէ անձի սուբյեկտիվ **գնահատականը** մեկ այլ անձի մասին (օրինակ՝ «Ա-ն ստահակ է»): Այդուհանդերձ, որոշ հանգամանքներում դժվար է այս երկու հասկացությունները միմյանցից զանազանել:

Հաջորդ քայլը պետք է լինի պարզելը, թե տվյալ արտահայտությունը իր բնույթով արատավորող է, թե ոչ: Սա կարևոր հանգամանք է, քանզի անձի մասին բացասական իմաստ պարունակող ոչ բոլոր փաստացի հայտարարությունները կամ գնահատողական դատողություններն են համարվում վիրավորական կամ զրպարտող: Եթե փաստացի հայտարարությունը կամ գնահատականը պարունակում է **այն աստիճանի** բացասական իմաստ, որ հավասարազոր է անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի **արատավորմանը**, այդ դեպքում միայն տվյալ հայտարարությունը կբնութագրվի վիրավորական կամ զրպարտող: Այսինքն, արտահայտության արատավորող լինելը նվազագույն շեմ է կամ նախապայման, որի առկայության դեպքում միայն կարելի է պնդել, որ արտահայտությունը վիրավորական է կամ զրպարտող:

Եթե պարզեցիք, որ հայտարարությունը պարունակում է վիրավորանք կամ զրպարտություն, որն արատավորում է ձեր արժանապատվությունը կամ գործարար համբավը, հաջորդ քայլը պետք է լինի որոշելը, թե իրավական պաշտպանության ո՞ր

---

[1] Տես՝ ի թիվս այլոց՝ Վճռաբեկ դատարանի Կարեն և Տատյանա Տոնոյաններն ընդդեմ Սոնա Ավագյանի՝ հրապարակայնորեն ներողություն խնդրելու պարտավորեցնելու և վիրավորանքի համար փոխհատուցում վճարելու պահանջների մասին ԵԱԴԴ/0524/02/12 04.10.2013թ որոշումը.

> «*Մեկնաբանվող հոդվածի կարգավորումից դուրս են այն դեպքերը, երբ հայտարարությունը կատարվել է ոչ հրապարակային (անձը վիրավորել է տուժողին առանց երրորդ անձանց ներկայության*)»:

ճանապարհով եք ուզում առաջնորդվել: Կա երկու ուղղություն. մինչդատական և դատական: Սրանք գործում են իրարից զատ և պայմանավորված չեն մեկը մյուսով: Դուք կարող եք ձեր հայեցողությամբ ընտրություն կատարել պաշտպանության այս երկու միջոցների միջև: Մինչդատական եղանակով դուք կարող եք նամակով դիմել տեղեկությունը տարածողին և պահանջել, որպեսզի նա հերքի տեղեկատվությունը (հերքման պահանջ) և/կամ հրապարակի ձեր պատասխանը (պատասխանի իրավունք): Կարող եք նաև խնդրել կատարել այնպիսի գործողություններ, որոնք սահմանված չեն օրենքով, քանի որ սա քաղաքացիաիրավական հարաբերություն է. օրինակ, ներողություն խնդրելը: Այնքանով, որքանով դուք ոչ թե **պահանջում** եք, այլ **խնդրում**, դուք կաշկանդված չեք ներկայացնել մի խնդրանք, որը սահմանված չէ օրենքով և, նմանապես, հասցեատերը կաշկանդված չէ ընդունել և կատարել ձեր խնդրանքը, նույնիսկ եթե դա սահմանված չէ օրենքով, քանի որ քաղաքացիաիրավական հարաբերություններում առաջնայինը իրավահարաբերությունների մասնակիցների կամքն է: Դուք կարող եք հերքման կամ պատասխանի հրապարակման պահանջով դիմել անձին մինչև դատարան դիմելը և մերժվելուց հետո միայն դիմել դատարան, կամ կարող եք առաջին իսկ քայլով դիմել դատարան՝ առանց նախապես հերքման կամ պատասխանի պահանջ ներկայացնելու: Այս երկու պաշտպանության եղանակներից որևէ մեկն ընտրելու հարցում անձը ունի հայեցողություն և, եթե նա չի դիմել հերքման կամ պատասխանի պահանջով, ապա չի նշանակում, որ նա չի կարող դիմել դատարան:

Վերը նշված կանոնն ունի բացառություն. եթե անձը մինչև դատարան դիմելը Զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում և (կամ) իր պատասխանի հրապարակում, և լրատվական գործունեություն իրականացնողը **կատարել է այդ պահանջը,** անձը չի կարող դրանից հետո դիմել դատարան: Դիմելու դեպքում նրա դիմումը կմերժվի: Այս սահմանափակումը սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 10-րդ մասում:

Վերը նշված սահմանափակման իմաստն այն է, որ անձը չօգտվի իրավական պաշտպանության միաժամանակ երկու հնարավորությունից, ինչը պատասխանող կողմին (օրինակ՝ լրատվամիջոցին) կդնի անհամաչափ ծանր բեռի տակ: Եթե անձը ստացել է հերքման կամ պատասխանի հնարավորություն, ապա համարվում է, որ նա արդեն ստացել է իրավական պաշտպանության արդյունավետ և համարժեք միջոց՝ նա վերականգնել է իր խախտված իրավունքը: Եվ հետևաբար, կարիք չկա նրան տրամադրել պաշտպանության հավելյալ հնարավորություն՝ դրամական փոխհատուցում հայցելու միջոցով, որի արդյունքում լրատվամիջոցները կհայտնվեն կրկնակի բեռի տակ:

Հերքման և/կամ պատասխանի իրավունքը և դրանց իրականացման կարգը սահմանվում է Զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքում:

## Հերքում

Հերքման և (կամ) պատասխանի հրապարակման պահանջը ենթակա է մերժման, եթե պահանջը ներկայացվել է անանուն կամ հակասում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտին:

Հերքման պահանջը պետք է ներկայացվի մեկամսյա ժամկետում, որը հաշվվում է այն տեղեկատվության տարածման օրվանից, որին վերաբերում է հերքումը:

Լրատվական գործունեություն իրականացնողը հերքման պահանջը ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, պարտավոր է հերքման պահանջը ներկայացնողին տեղեկացնել

հերքումը տարածելու ժամանակի մասին կամ գրավոր հայտնել հերքման տարածման պահանջը մերժելու մասին: Այդ ժամկետում լրատվության միջոցի թողարկում տեղի չունենալու կամ միակ թողարկումն արդեն իսկ թույլատրված լինելու դեպքում՝ հերքումը պետք է տեղ գտնի լրատվության միջոցի առաջին իսկ թողարկման մեջ:

Հերքումը պետք է իրականացվի «Հերքում» խորագրի ներքո: Տեղակայման, ձևավորման, տառատեսակի չափի ու տեսակի, հաղորդման ժամի առումով հերքումը չպետք է զիջի այն տեղեկատվությանը, որին վերաբերում է: Եթե հերքման տեքստը չի համապատասխանում օրենքով սահմանված պայմաններին՝ տեղակայման եղանակը, ֆորմատը, չափը, տեսակը, հաղորդման ժամը, և այլն (անբարենպաստ են պահանջը ներկայացնողի համար), հերքման պահանջի կատարումը համարվում է խախտված: Նման դեպք արձանագրվել է *Արա Գաբուզյանն ընդդեմ «Բանաձև ՍՊԸ-ի»* դատական գործով, որին ՏՎԽ-ն անդրադարձել է իր թիվ 15 որոշման մեջ:

Եթե վիճահարույց հոդվածում հրապարակվում է նաև հոդվածի հասցեատիրոջ մերժողական պատասխանը, այդ հանգամանքը չի կարող հետագայում ներկայացվել որպես հերքման կամ պատասխանի պահանջի բավարարում (տես՝ ՏՎԽ-ի թիվ 20 որոշում):

Հերքման պահանջի հետ անձն իրավունք ունի պահանջել նաև իր պատասխանի հրապարակումը: Լրատվական գործունեություն իրականացնողը կարող է պատասխանի հրապարակումը զուգակցել կամ չզուգակցել հերքումով:

Հերքման պահանջը բավարարված է համարվում, եթե լրատվական գործունեություն իրականացնողը հրապարակել է պատասխան:

## Պատասխանի իրավունք

Պատասխանի հրապարակման պահանջի վրա տարածվում են նույն կանոնները, որոնք սահմանված են հերքման պահանջի հրապարակման դեպքում: Պատասխանը պետք է վերաբերի միայն պատասխանի առարկա տեղեկատվության մեջ տեղ գտած փաստացի անճշտություններին: Այն չպետք է պարունակի պատասխանի առարկա տեղեկատվությունը պատրաստած կամ տարածած անձի, ցանկացած այլ անձի կամ նրանց գործունեության քննադատություն, եթե դա ուղղակիորեն կապված չէ այդ տեղեկատվության հետ:

Պատասխանի ծավալը չպետք է գերազանցի պատասխանի առարկա տեղեկատվության ծավալը: Եթե պատասխանի առարկա տեղեկատվությունը բազմաբովանդակ նյութի ամբողջ ծավալից հստակ սահմանազատվող ինքնուրույն, առանձին հատված է, ապա պատասխանի ծավալը չպետք է գերազանցի այդ հատվածի ծավալը: Պատասխանը պետք է հրապարակվի անվճար:

Զանգվածային լրատվության մասին օրենքի և Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածների համեմատական վերլուծությունից բխում է, որ հերքման և պատասխանի դիմելու արտադատական պաշտպանության միջոցը առավելապես զրպարտությունից պաշտպանվելու միջոց է: Օրենքը վիրավորված անձից ներողություն խնդրելու և այդ տեքստը հրապարակելու առանձին կարգ չի նախատեսել: Սակայն այս հարաբերություններում կողմերն ազատ են՝ փոխադարձ համաձայնությամբ օրենքով չսահմանված պարտավորություններ ստանձնել և գործողություններ կատարել: ԶԼՄ-ի կողմից հայցվորի պահանջը կատարել-չկատարելու հանգամանքը հետագա հնարավոր դատավարության ընթացքում դատարանի կողմից կարող է գնահատվել անձի պատիվն ու արժանապատվությունը արատավորելու, վիրավորելու դիտավորության հատկանիշ բացահայտելիս:

# ԳԼՈՒԽ II.
# ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼԸ

## ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ

Իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության միջոցի դիմելու ժամանակահատվածը կոչվում է հայցային վաղեմության ժամկետ կամ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, երբ անձը հայցով դիմում է դատարան: (տես՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածը):

Դատարանն իր նախաձեռնությամբ իրավասու չէ կիրառել հայցային վաղեմության ժամկետ:

Դատարանն իրավունքի պաշտպանության մասին պահանջը պետք է քննության ընդունի հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ:

Դատարանը հայցային վաղեմությունը կարող է կիրառել միայն հայցով պատասխանողի դիմումով: Դիմում պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումը պետք է տրվի միայն առաջին ատյանի դատարանում և առաջին անգամ գործի քննության ընթացքում, վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև վճիռը բեկանելուց և առաջին ատյանի դատարանում նոր քննության շրջանակներում նման դիմում ներկայացնելու դեպքում այն կմերժվի: Այս խնդրին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է, ի թիվս այլոց՝ ԼԴ/0749/02/10 գործով[2] 27.04.2012թ. որոշման մեջ.

> *«…Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն չի ներկայացրել Դատարանում [առաջին ատյանի] գործի քննության ընթացքում, մինչդեռ, զրկված չի եղել Դատարանում նման միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից, այլ հայցային վաղեմության ժամկետի խախտման մասին դիրքորոշում հայտնել է վերաքննիչ և վճռաբեկ բողոքներում»:*

Զրպարտության և վիրավորանքի հայցային վաղեմության ժամկետը մեկ ամիս է՝ այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքի կամ զրպարտության մասին, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում: Սա նշանակում է, որ անկախ անձին՝ իրեն վիրավորելու կամ զրպարտելու մասին հայտնի դառնալու պահից, եթե հրապարակումից անցել է վեց և ավելի ամիս ժամանակ՝ դատարանը հայցը պետք է մերժի, եթե պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու միջնորդություն է ներկայացրել:

Պատասխանողի կողմից հայցային վաղեմության ժամկետ կիրառելու միջնորդություն ներկայացված լինելու պարագայում պետք է պարզել այն փաստը (տես՝ ապացուցման բեռի

[2] Վճռաբեկ դատարանի՝ Վանո Եղիազարյանի ընդդեմ Բորիս Աշրաֆյանի, երրորդ անձ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջների մասին ԼԴ/0749/02/10 գործով 27.04.2012թ որոշում:

բաշխման կանոնները), թե հայցվորը երբ է **իմացել** իր իրավունքի հնարավոր խախտման մասին, քանի որ իմանալու պահից անմիջապես հետո սկսում է հայցային վաղեմության ժամկետի հոսքը (տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1558(ՎԴ) քաղաքացական գործով 12.12.2007թ. որոշումը[3], որին ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը № ԵԿԴ 2374/02/10 գործով[4] 27.02.2012թ, ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը № ՇԴ/1469/02/11/ գործով[5] 11.06.2012թ կայացրած վճիռներով, հայցերը մերժել են հայցային վաղեմության ժամկետի խախտման՝ հայցային վաղեմության 1-ամյա ժամկետը բաց թողնելու հիմքով՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումները.

*«Հայկ Բորիսի Բաբուխանյանը, [..] գտնելով, որ «[…] www.report.am էլեկտրոնային լրատվական միջոցով 31.08.2010 թվականին տպագրված «ԻՐԱՎՈՒՆՔԻ» ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԿ ԲԱԲՈՒԽԱՆՅԱՆԻ ԹՐԻ ԾԱՅՐԻՆ Է» հոդվածը «պարունակում է այնպիսի արտահայտություններ […], որոնք կրում են և վիրավորական բնույթ և հանդիսանում են որպես զրպարտություն, […]» 11.11.2010թ. հայց են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Խմբագիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, Էդիկ Անդրեասյանի՝ պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության պահանջով:*

*….*

*Ինչպես արդեն նշվել է վերը, պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու հայցով Հայկ Բաբուխանյանի և […] դատարան հայցը ներկայացվել է 11.11.2010թ.-ին, մինչդեռ «Իրավունքի» իրավունքը Հայկ Բաբուխանյանի թրի ծայրին է» հոդվածը […] www.report.am էլեկտրոնային լրատվական միջոցով տպագրվել է 31.08.2010թ.-ին:*

*Գործի քննությամբ հայցվոր կողմը իր պահանջի հիմքում չի դրել հանգամանք այն մասին, որ […] www.report.am էլեկտրոնային լրատվական միջոցով 31.08.2010թ.-ին տպագրված […] հոդվածի մասին իրեն հայտնի է դարձել ավելի ուշ, քան տպագրված նյութի օրը, ինչի պատճառով էլ հայցվոր կողմը՝ պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության համար դատարան է դիմել 11.11.2010թ.-ին, բաց թողնելով օրենքով նախատեսված մեկ ամսյա ժամկետը:*

*Ուստի, դատարանը գտնում է, հայցվորների կողմից բաց է թողնվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ մասով նախատեսված մեկ*

---

[3] Տե՛ս կետ 4, պարբ 9.:

[4] ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի Հայկ Բորիսի Բաբուխանյանը, «Իրավունք Մեդիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ «Խմբագիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, Էդիկ Անդրեասյանի՝ պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության պահանջի մասին№ ԵԿԴ/2374/02/10 գործով 27.02.2012թ վճիռը:

[5] ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Արման Մինասի Ավետիսյանն ընդդեմ Լևոն Ալբերտի Բարսեղյանի՝ պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունների հերքման, հրապարակայնորեն ներողություն խնդրելու պարտավորեցման և պատճառված վնասի հատուցման պահանջների մասին ՇԴ/1469/02/11 գործով 11.06.2012թ վճիռը:

*ամսվա ժամկետը՝ պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության պահանջով իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելու համար»:*

Եվ.

*« Սույն գործով ձեռք բերված և հետազոտված ապացույցներով Դատարանը հաստատված է համարում, որ հայցվոր Արման Ավետիսյանը, տեղեկանալով «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում 11.06.2011թ. հրապարակված «Կան բաներ, որ չեն ներվում» և 15.06.2011թ. հրապարակված է «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» հոդվածների մասին, որոնցում հրապարակված տեղեկություններով, ըստ հայցվոր Ա. Ավետիսյանի, զրպարտության և վիրավորանքի միջոցով արատավորվել է նրա պատիվն ու արժանապատվությունը, 23.06.2011թ. նամակ է ուղարկել Լևոն Բարսեղյանին, որով վերը նշված հոդվածներում նշված տեղեկությունները գնահատել է որպես իրականությանը չհամապատասխանող և իր պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկություններ՝ պահանջելով հերքում կամ պատասխան հրապարակել: Այսինքն՝ հայցվոր Ա. Ավետիսյանին նրա իրավունքի հնարավոր խախտման մասին հայտնի է դարձել 23.06.2011թ.: Բացի այդ, հայցվոր Ա. Ավետիսյանի պահանջով նրա նամակը, որպես նրա վերաբերյալ հրապարակված տեղեկությունների պատասխան, www.asparez.am ինտերնետային կայքում հրապարակվել է 30.06.2011թ., որի մասին հայցվոր Ա. Ավետիսյանը տեղեկացել է 02.07.2011թ.: Այսինքն՝ 02.07.2011թ. այն անվիճելի ժամկետն է, որից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333 հոդվածի 1-ին մասի և 1087.1 հոդվածի 13-րդ մասի համաձայն, սկսվում է հայցային վաղեմության հոսքը, և հայցվոր Ա. Ավետիսյանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության պահանջով հայց կարող էր ներկայացնել դատարան՝ սկսած 02.07.2011թ-ից մեկամյա ժամկետում, այսինքն՝ մինչև 02.08.2011թ., սակայն հայցվոր Ա. Ավետիսյանի կողմից իր իրավունքի պաշտպանության պահանջով հայցը դատարան է ներկայացվել 04.08.2011թ.՝ նշված օրը հայցադիմումը ծրարով հանձնելով փոստային բաժանմունքին:*

*Վերը նշվածից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ հայցվոր Ա. Ավետիսյանը բաց է թողել հայցային վաղեմության օրենքով սահմանված մեկամյա ժամկետը, իսկ 11.10.2011թ. նախնական դատական նիստում պատասխանող Լևոն Բարսեղյանը խնդրել է կիրառել հայցային վաղեմություն կիրառելու մասին, որպիսի հիմքը Դատարանը բավարար է համարում հայցն ամբողջությամբ մերժելու համար, ուստի և նպատակահարմար չի համարում անդրադառնալ գործի մյուս հանգամանքներին և կողմերի ներկայացրած պատճառաբանություններին:*

*Անդրադառնալով հայցվոր կողմի այն պատճառաբանությանը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ մասով սահմանված է հայցային վաղեմության ոչ թե մեկամյա, այլ՝ վեցամյա ժամկետ, և հայցվորը հայցային վաղեմության ժամկետը բաց չի թողել, անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ:*

*«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ … :*

*Այսպիսով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86 հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ նշված հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության պահանջով դատարան հայց ներկայացնելու մեկամյա ժամկետի հաշվարկը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքի կամ զրպարտության մասին, իսկ նույն հոդվածով սահմանված վեցամսյա ժամկետը՝ դա առավելագույն այն ժամկետն է, որի դեպքում կարող է հայց հարուցվել դատարան վիրավորանքի կամ զրպարտության պահից: Այսինքն՝ տվյալ դեպքում անհրաժեշտ են վերը նշված երկու ժամկետների միաժամանակյա առկայությունը՝ նախ վիրավորանքի կամ զրպարտության մասին հայցվորի իմանալու պահից չպետք է անցած լինի մեկ ամսից ավել ժամանակ, և վիրավորանքի կամ զրպարտության պահից չպետք է անցած լինի վեց ամսից ավել ժամանակ: Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով նախատեսված հայցային վաղեմության ժամկետը լրացել է, քանի որ հայցը դատարան է ներկայացվել վիրավորանքի կամ զրպարտության մասին իմանալու պահից մեկ ամսից ավել ժամանակ անցնելուց հետո, իսկ վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամիս ժամկետը լրացած չլինելու հանգամանքը չի կարող արգելք հանդիսանալ հայցային վաղեմություն կիրառելու համար»:*

Այս գործերին ՏՎԽ-ն անդրադարձել է իր թիվ 9 որոշման մեջ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով սահմանված է միայն վաղեմության ժամկետի տևողությունը, իսկ այս իրավահարաբերություններին բնորոշ այլ կանոնակարգումները՝ որպես ընդհանուր բնույթի նորմեր, սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 21-րդ գլխում, ինչպես նաև դրանց նկատմամբ կիրառելի են դատական ակտերով իրավադրույթներին տրված մեկնաբանությունները: Որպես օրինակ՝ հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը հայցվորի միջնորդության հիման վրա կարող է դատարանի կողմից հարգելի համարվել: Այս միջնորդությունը, բնականաբար, կարող է հարուցվել, եթե պատասխանողի կողմից դատարանին ներկայացվել է պահանջ՝ վաղեմության ժամկետը բաց թողնելու հիմքով հայցը մերժելու մասին և, եթե հայցվորն ընդունում է այդ փաստը՝ համաձայն է, որ իր կողմից բաց է թողնվել վաղեմության ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը սահմանում է, որ բացառիկ դեպքերում՝ ծանր հիվանդություն, անօգնական վիճակ, անգրագիտություն և այլն, հայցային վաղեմության ժամկետի բացթողումը դատարանը կարող է հարգելի ճանաչել, վերականգնել հայցային վաղեմության ժամկետը և քննության առնել հայցի բովանդակությունն ու լուծում տալ վեճին: Ընդ որում, թվարկված **բացառիկ դեպքերը սպառիչ չեն** և հայցվորի կողմից ներկայացված փաստը, որպես բացառիկ դեպք գնահատելու լիազորություն, թողնված է դատարանին:

# 1. ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

## 1.1. Հայցի պահանջը, առարկան

Անձի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելուն և վերականգնելուն ուղղված հայցի առարկան կարող է պարունակել 1087.1-րդ հոդվածով նախանշված՝

**ա) ոչ նյութական պահանջներ՝**

– ներողություն խնդրելու և/կամ
– հերքում հրապարակելու պահանջ և/կամ,
– կրած ոչ նյութական վնասի դիմաց՝ համարժեք նյութական (փողի ձևով) փոխհատուցման պահանջ և/կամ,

**բ) նյութական պահանջներ՝**

– զրպարտության և/կամ վիրավորանքի հետևանքով կրած գույքային վնասի հատուցման պահանջ (փողի ձևով):

Այս պահանջները պետք է տարանջատված լինեն, որպեսզի դյուրին լինի դրանց ապացուցման պարտականությունը կատարելը՝ թե՛ հայցվորի, թե՛ պատասխանողի համար:

## 1.2. Զրպարտությունից պաշտպանվելու հայցի պահանջը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը.

1) եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով Զանգվածային լրատվության մասին օրենքով:
2) վճարել փոխհատուցում սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով:

Զրպարտության դեպքում, որպես ներազդման միջոց, նախատեսված են երկուսը՝ *զրպարտություն համարվող տեղեկատվության հերքումը և ոչ նյութական վնասի դրամային հատուցումը:*

Բոլոր այն դեպքերում, երբ զրպարտության դեպքում հայցով կներկայացվի այլ պահանջ (բացառությամբ գույքային վնասի հատուցման պահանջի), օրինակ՝ ներողություն խնդրելու, քաղաքացիաիրավական պատասխանատվության այլ միջոց, ապա դա կլինի ոչ իրավաչափ ու դատարանն այդ պահանջը կմերժի: Իսկ դատարանի կողմից այդ պահանջը բավարարելու դեպքում՝ դա կլինի օրենքով չնախատեսված միջամտություն խոսքի ազատության իրավունքին: Այդպիսի միջամտությունը կհանգեցնի սահմանադրորեն

ամրագրված հիմնարար իրավունքի խախտման ու հիմք կհանդիսանա դատական ակտը բեկանելու համար[6]:

## 1.3. Վիրավորանքից պաշտպանվելու հայցի պահանջը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը.

1) հրապարակայնորեն ներողություն խնդրել: Ներողություն խնդրելու ձևը սահմանում է դատարանը:
2) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը: Հրապարակման եղանակը և ծավալը սահմանում է դատարանը:
3) վճարել փոխհատուցում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով:

Հայցում կարելի է նշել փոխհատուցման ենթակա դատական ծախսերի չափը՝ որպես կրած գույքային վնաս: Այդ դեպքում դատարանն իրավասու չէ գնահատել փաստաբանական ծառայությունները՝ «խելամտության» տեսակետից: Այս պարագայում հայցին պետք է կցվի համապատասխան չափով պետական տուրք. հայցվորը պետք է հաշվի առնի, որ հայցը մերժվելու դեպքում նա կկորցնի փաստաբանի վարձատրության չափին համարժեք պետական տուրքի վճարված գումարը: Փաստաբանի վարձատրության չափ չնշելու դեպքում բավարար է դատարան ներկայացնել ծառայությունների մատուցման պայմանագիր: Այդ դեպքում անհրաժեշտություն չկա հայցի պահանջներում ներառել փաստաբանի վարձատրության գումարը բռնագանձելու պահանջը. դատարանը հայցը բավարարելու դեպքում օրենքի ուժով կանդրադառնա դատական ծախսերի բաշխման խնդրին՝ գնահատելով փաստաբանական ծախսերը խելամտության տեսակետից: Այս դեպքում պետական տուրք վճարելու կարիք չի լինի:

## 1.4. Պատասխանողի ընտրությունը

Զրպարտության և վիրավորանքի գործերով պատասխանատվությունը կրում է տեղեկատվության աղբյուրը կամ հեղինակը: Իսկ այն դեպքերում, երբ տեղեկատվության աղբյուրը կամ հեղինակը հանդես է գալիս անանուն եղանակով կամ կեղծ անհատական տվյալներով, դատավարության սուբյեկտը, այսինքն՝ պատասխանողը, այդ տեղեկատվության «տարածողն» է (այլ կերպ՝ հրապարակողը, արտատպողը կամ վերարտադրողը):

Եթե արտահայտությունը կատարել է լրագրողը, հրապարակախոսը և այլն, ու այդ նյութը տպագրվել և/կամ հեռարձակվել է ԶԼՄ-ում, ապա հայցը պետք է ներկայացվի լրագրողի, հրապարակախոսի դեմ, ով անմիջականորեն հանդիսանում է արտահայտության հեղինակը:

---

[6] Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/0807/02/11 գործով 04.07.2013թ. որոշումը Մարգարիտա Խաչատրյանն ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի՝ 21.04.2011թ. «Հրապարակ» օրաթերթի 73(684) համարի 1-ին էջում հրապարակված հոդվածի հերքումը «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի կողմից տպագրելու պահանջի մասին:

Հերքման, հրապարակային ներողություն խնդրելու տեքստերը հրապարակելու պահանջները զրպարտության և վիրավորանքի փաստի հաստատումից ածանցվող պահանջներ են: Այդ պահանջի մասով պատասխանող կարող է լինել զրպարտող և վիրավորող արտահայտությունների հեղինակին տարածման հարթակ տրամադրողը(ները)՝ ԶԼՄ-ն և այլն: Հերքման կամ հրապարակային ներողություն խնդրելու տեքստերը կամ դատական ակտը հրապարակելու պահանջի մասով պատասխանողի դատավարական կարգավիճակը՝ «համապատասխանող» կամ «երկրորդ պատասխանող» է: Եթե վերը նկարագրված իրավիճակում հայցը ներկայացվի միայն արտահայտությունների հեղինակի կամ միայն ԶԼՄ-ի դեմ, ապա տեքստը հրապարակելու պահանջի մասով արտահայտությունների հեղինակը պատշաճ պատասխանող չէ, իսկ վնասի փոխհատուցման, ներողություն խնդրելու պահանջի մասով պատշաճ պատասխանող չէ ԶԼՄ-ն:

Երկու (կամ ավելի) պատասխանողների դեմ պահանջի ներկայացումն անհրաժեշտություն է անձի խախտված արժանապատվությունն արդյունավետ պաշտպանելու և լիարժեք վերականգնելու համար: Պետք է հաշվի առնել, որ ԶԼՄ-ի կամքի բացակայության պարագայում լրագրողը, հրապարակողը չի կարողանա լրատվության այդ միջոցով հրապարակումներ իրականացնել:

Եթե հայցը միայն ներկայացվել է լրագրողի կամ հրապարակողի դեմ, ապա հայցի ոչ նյութական հատուցման պահանջների բավարարումը (հերքման կամ ներողություն խնդրելու տեքստը և հայցվորի համար հնարավոր բարենպաստ վճռի ամբողջական տեքստը ԶԼՄ-ում հրապարակելը) միջամտություն կլինի հայցվորից (արտահայտության հեղինակից) տարբերվող անձի՝ ԶԼՄ-ի իրավունքներին: Օրինակ, Ա.Կ. թղթակիցը «ԻՖ» թերթում հրապարակած հոդվածում վիրավորել է Ա.Գ.-ին: Վերջինս հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Ա.Կ.-ի՝ պահանջելով ներողություն խնդրել իրենից և այդ տեքստը հրապարակել «ԻՖ» թերթում: Եթե Դատարանը բավարարել է հայցը և պարտավորեցրել «ԻՖ» թերթին հրապարակել Ա.Կ.-ի ներողության տեքստը, ապա տեղի է ունեցել «ԻՖ» թերթի իրավունքներին ոչ իրավաչափ միջամտություն, քանի որ վերջինիս դեմ հայց ներկայացված չի եղել, նա դատաքննությանը մասնակից չի եղել՝ չօգտվելով դրանից բխող իրավունքներից:

Ներողություն հայցող տեքստի և այն հրապարակելուն պարտավորեցնող դատական ակտի հրապարակումը լրատվության միջոցում կախված է վերջինիս կամքից: Այն դեպքում, եթե ԶԼՄ-ն չի ներգրավվում գործում որպես համապատասխանող կամ երկրորդ պատասխանող և չի մասնակցում գործին, ապա նրա իրավունքների ու պարտականությունների մասին վճիռը ոչ օրինական է ու հիմք կհանդիսանա բեկանման համար: Օրինակ, ներողություն հայցող տեքստի և դա հրապարակելը պարտավորեցնող դատական ակտը հրապարակելու պահանջներով հայցը դատարանի կողմից նույնությամբ բավարարելու և պատասխանողի կողմից կամավոր չկատարելու դեպքում ԴԱՀԿ ծառայության կողմից այն չի կարող կատարվել. կատարողական թերթում բացակայելու է այն անձի անվանումը՝ ում հարկադրելով հնարավոր կլինի հասնել հայցվորի իրավունքների վերականգնմանը:

Այն դեպքում, երբ վիրավորող կամ զրպարտող հրապարակումը հղում չի պարունակում տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը՝ քաղաքացիական պատասխանատվությունն ընդհանրապես, կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը: Եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն

իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա՝ լրատվական գործունեություն իրականացնողը (տես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ-րդ հոդվածի 9-րդ կետը): Այս դեպքում՝ վերոնկարագրյալ երկու պահանջների մասով էլ որպես պատասխանող պետք է հանդես գա ԶԼՄ-ն:

Այն դեպքում, երբ վիրավորող կամ զրպարտող արտահայտությունը ԶԼՄ-ն արտատպել է (պատշաճ ընթացակարգերի պահպանմամբ, տես՝ ստորև), ապա հերքման կամ ներողության կամ դատական ակտի տեքստերի հրապարակման պահանջի մասով այդ ԶԼՄ-ն չի կարող լինել հիմնական պահանջի պատասխանող: Այս դեպքում ԶԼՄ-ն պարտավոր չէ ապացուցել արտահայտության վիրավորական կամ զրպարտող չլինելու հանգամանքը՝ բավարար է ապացուցել «արտատպումի» պատշաճ ընթացակարգերի պահպանմամբ իրականացրած լինելու փաստը (տես՝ "Ողջամիտ հրապարակում" և "Տեղեկատվության վերարտադրում" բաժինները):

## 1.5. Հայցի ապահովման միջոց

Հայցվորը դատավարության ցանկացած փուլում կարող է միջնորդություն ներկայացնել դատարան (այդ թվում՝ հայցի հետ) հայցի ապահովման միջոց կիրառելու համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը (Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 97-րդ հոդված):

Հայցվորը որպես հայցի ապահովման միջոց կարող է պահանջել հայցագնի չափով արգելանք դնել պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա: Այն դեպքերում, երբ ԶԼՄ-ն դատաքննության ընթացքում շարունակում է տարածել հայցվորի պատիվն ու արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկություններ, հայցվորը կարող է դատարանին միջնորդել արգելել պատասխանողին որոշակի գործողություններ կատարել, օրինակ՝ դադարեցնել նմանատիպ հրապարակումները (ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 98-րդ հոդված):

# 2. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ

Զրպարտության և վիրավորանքի գործերով նախնական դատական նիստի պատշաճ անցկացումն էական նշանակություն ունի գործի ելքի համար: ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.8.-րդ հոդվածը սահմանում է նախնական դատական նիստի կարգը:

Նախնական դատական նիստում դատարանը պարզում է հայցի առարկան ու հիմքը, վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը: Դատարանը պարզում է նաև գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը, կողմերի հետ քննարկում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան՝ կողմերի միջև բաշխում է ապացուցման պարտականությունը: Ինչպես նաև, նախնական դատական նիստում դատարանը սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները. պահանջում է անհրաժեշտ ապացույցներ, լուծում է փորձաքննություն նշանակելու, դատական նիստին փորձագետներ, վկաներ կանչելու, թարգմանիչ ներգրավելու, տեղում իրեղեն և գրավոր ապացույցներն ուսումնասիրելու հարցերը, լուծում է հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման, ապացույցների ապահովման հարցերը, քննարկում է գործի քննությանն այլ անձանց ներգրավելու, ոչ պատշաճ կողմին փոխարինելու, մի քանի

պահանջների միացման և առանձնացման, արտագնա դատաքննության անցկացման հնարավորության հարցերը, որոշում է ապացույցների հետազոտման կարգը:

Ապացույցներ ներկայացնում են գործին մասնակցող անձինք, սակայն դատարանի կողմից գործի նախապատրաստական փուլում ապացուցման առարկան և բեռը բաշխելուց հետո կողմերն հնարավորություն ունեն ներկայացնել այն ապացույցները, որոնցով վերջիններս կարող են հիմնավորել իրենց պահանջները և առարկությունները (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 49-րդ և 149.8-րդ հոդվածներ)[7]:

Հայցի առարկան ու հիմքը պարզելու փուլում պետք է հստակեցվեն այն արտահայտությունները, որոնք վիրավորական են կամ զրպարտող: Սա ճշգրտորեն կատարելու շահագրգռվածությունը պետք է դրսևորի հայցվորը՝ պայմանավորված այս փաստի ապացուցման պարտականությամբ և հնարավոր բացասական հետևանքներով:

Արտահայտության՝ «ստույգ փաստ» կամ «գնահատողական դատողություն» լինելու փաստի ապացուցման բեռը համապատասխանաբար կրում են հայցվորը և պատասխանողը: Այսինքն, այն, որ արտահայտությունը հիմնված չի եղել «ստույգ փաստի» վրա՝ ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը (տես՝ «Արտահայտության վիրավորական լինելու ապացուցման բեռը» բաժինը), իսկ այն, որ «գնահատողական դատողության» հիմքում առկա է բավարար փաստական կազմ՝ ապացուցման բեռը կրում է պատասխանողը (տես՝ «Գերակա հանրային շահի ապացուցման բեռը» բաժինը):

Ապացուցում պահանջող փաստերի շրջանակի քննարկման փուլում դատարանը, առանց դուրս գալու հայցի շրջանակներից, պարզում է պատասխանատվությունը վրա հասնելու համար պարտադիր այն փաստերը, որոնք չեն ընդունվում հայցվորի, պատասխանողի և երկրորդ պատասխանողի կողմից: Դատարանն այդ փաստերի ապացուցման պարտականությունը բաշխում է՝ դրանց ապացուցման կանոններին համապատասխան[8]:

Անհրաժեշտություն չկա կրկին ապացուցել դատավարության մասնակիցների համար ընդունելի փաստերը և ներկայացնել դրանց վերաբերյալ ապացույցներ:

---

[7] ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Երևանի քաղաքապետարանի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ Դավիթ Մարտիրոսյանի ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունի անձնագրային բաժնի՝ հաշվառումից հանելու և առանց փոխհատուցման ապօրինի զբաղեցրած տարածքից վտարելու պահանջների մասին ԵԷԴ/1637/02/09 գործով 27.05.2011թ. որոշումը:

[8] ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Երևանի քաղաքապետարանի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ Դավիթ Մարտիրոսյանի ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունի անձնագրային բաժնի՝ հաշվառումից հանելու և առանց փոխհատուցման ապօրինի զբաղեցրած տարածքից վտարելու պահանջների մասին ԵԷԴ/1637/02/09 գործով 27.05.2011թ. որոշումը և ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Կարեն և Տատյանա Տոնոյաններն ընդդեմ Սոնա Ավագյանի՝ հրապարակայնորեն ներողություն խնդրելուն պարտավորեցնելու և վիրավորանքի համար փոխհատուցում վճարելու պահանջների մասին ԵԱԴԴ/0524/02/12 քաղաքացիական գործով 04.10.2013թ. որոշումը:

# 3. ԱՊԱՑՈՒՅՄԱՆ ԲԵՌԸ

## 3.1. Ընդհանուր սկզբունքը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածում տարանջատված են «զրպարտությունը» ու «վիրավորանքը», տարբերակված են ինչպես դրանցից անձի արժանապատվության պաշտպանության, այնպես էլ՝ զրպարտելու կամ վիրավորելու մեջ մեղադրվող կողմի պաշտպանության ընթացակարգերը:

Որպեսզի պատասխանողը կարողանա պաշտպանվել իրեն ներկայացված մեղադրանքից, ինչպես նաեւ դատարանը կարողանա գնահատել հնարավոր խախտված իրավունքը վերականգնելու համար պահանջվող եղանակը, պիտանիությունը, համաչափությունը, պահանջվող փոխհատուցման չափի ու զրպարտվելու կամ վիրավորվելու պատճառով կրած վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, համաչափությունը, հայցվոր կողմը պետք է դատարանին ու պատասխանողին ներկայացնի այն արտահայտությունները, որոնք իր կարծիքով զրպարտող կամ վիրավորական են:

**Մրցակցային դատավարությունում ո՛չ դատարանը և ո՛չ պատասխանողը հայցվորի փոխարեն պարտավոր չեն գնահատել արտահայտությունների վիրավորական կմ զրպատող լինելը (դատավորը նաև իրավունք չունի)**: Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ ինքն է կրում իր վկայակոչած փաստերի ապացուցման պարտականությունը[9] և, եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

**Եթե կողմը, ում վրա օրենքով դրված է փաստն ապացուցելու պարտականությունը, չի կարողանում ապացուցել այդ փաստը, ապա այն համարվում է չապացուցված, և նրա պահանջը չի կարող բավարարվել**: ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը ԳԴ/0241/02/11 գործով 19.03.2012թ վճռում[10] այս խնդրին տվել է հետևյալ իրավական լուծումը.

> *«Քննության առնելով հակընդդեմ հայցը, վերը նշվածների և պատճառաբանությունների լույսի ներքո դատարանը արձանագրում է հետևյալը.*
>
> *Հակընդդեմ հայցվորը նշել է, որ մամուլին տված հարցազրույցներում սկզբնական հայցվորը հակընդդեմ հայցվորի դեմ ներկայացրել է ստահոդ փաստեր և իր գործունեությամբ զրպարտել է վերջինիս: Մինչդեռ, ակնհայտ չէ, թե*

---

[9] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդված:

[10] ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ Լոռու մարզի մարզպետ Նվեր Ղազարի Պողոսյանի ընդդեմ «Ժողովուրդ թերթի խմբագրության» ՍՊԸ և Աննա Թորոսյանի՝ պատիվն ու արժանապատվությանն արատավորող տեղեկությունները հերքելու և զրպարտության փոխհատուցման գումար բռնագանձելու պահանջների մասին և «Ժողովուրդ թերթի խմբագրության» ՍՊԸ ընդդեմ Նվեր Ղազարի Պողոսյանի, երրորդ անձ Աննա Թորոսյանի՝ պատիվն ու արժանապատվությանն արատավորող տեղեկությունները հերքելու և զրպարտության փոխհատուցման գումար բռնագանձելու պահանջների մասին ԳԴ/0241/02/11 գործով 19.03.2012թ. վճիռ:

*հակընդդեմ պատասխանողի ո՞ր հարցազրույցում, ո՞ր լրատվական միջոցով կամ ո՞ր արտահայտություններն է հակընդդեմ հայցվորը դիտել վիրավորանք կամ զրպարտանք, որով էլ արատավորվել է վերջինիս պատիվն ու արժանապատվությունը և գործարար համբավը:*

*Սույն վեճի շրջանակներում էական նշանակություն ունի տեղեկությունների արատավորող և հրապարակային լինելը, ինչի ապացուցման պարտականությունը պետք է կրի պահանջ ներկայացնող կողմը, իսկ այդ տեղեկություններն իրականությանը համապատասխանելու և դրանով պահանջի դեմ առարկություններ ներկայացնելու պարտականությունը պետք է կրի պատասխանողը:*

*ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, այսինքն՝ հակընդդեմ հայցվոր «Ժողովուրդ թերթի խմբագրության» ՍՊԸ օրաթերթը պետք է ապացուցի տեղեկության արատավորող և տարածված լինելու հանգամանքը:*

*Հակընդդեմ հայցվորը փաստում է, որ սկզբնական հայցվորը վիրավորել և զրպարտել է իրեն չի նշել նաև, թե սկզբնական հայցվորի կողմից ներկայացված կոնկրետ, որ փաստը չի համապատասխանել իրականությանը: Իսկ եթե բացակայում են զրպարտություն համարվող տեղեկությունների վերոհիշյալ որակումները, ապա զրպարտության մասին խոսք անգամ լինել չի կարող:*

*Այսպիսով՝ դատարանը գտնում է, որ հակընդդեմ հայցվորը չի ներկայացրել բավարար ապացույցներ, որոնցով կհաստատվեր, որ հակընդդեմ հայցով պատասխանողը հրապարակայնորեն իր պատիվն ու արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկություններ է տարածում*»:

Հրապարակումից արտահայտություններն անջատելու, դրանք զրպարտող կամ վիրավորական լինելու տեսանկետից գնահատական տալու հստակեցումը պետք է ներկայացված լինի հայցում կամ ոչ ուշ՝ քան նախնական դատաքննության ժամանակ՝ մինչ դատաքննությունը: Այլապես, դատաքննության փուլում կամ վերադասության կարգով ոչ բարենպաստ դատական ակտը վիճարկելիս նման հստակեցում ներկայացնելու պարագայում՝ այդ հնարավորությունը բաց թողնված կլինի: Հայցվոր կողմը պետք է դատարանին ու պատասխանողին ներկայացնի այն արտահայտությունները, որոնք իր կարծիքով զրպարտող կամ վիրավորական են, իսկ հայցում կամ ոչ ուշ՝ քան նախնական դատաքննության ժամանակ հրապարակումից արտահայտություններն անջատած չլինելու, դրանք զրպարտող կամ վիրավորական լինելու տեսանկետից գնահատական տված չլինելու դեպքում՝ դատարանը հայցը կմերժի այն պատճառաբանությամբ, որ հայցվորի կողմը իր վերաբերյալ ներկայացված արտահայտությունների զրպարտող կամ վիրավորող լինելը չի ապացուցել:

Զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին:

Հրապարակման հիմքում ընկած փաստական հանգամանքների ապացուցման համար ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր պանջվելու հանգամանքի ապացուցման բեռը կրում է պատասխանողը (*տես ստորև*):

## 3.2. Վաղեմության ժամկետի մեկնարկի սկզբի ապացուցման բեռը

Հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբը պայմանավորված է անձի՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին տեղեկացված լինելու հետ[11]: Հայցային վաղեմության մասին վկայակոչած անձն է պարտավոր ապացուցել նաև այդ ժամկետի սկիզբը հաշվարկելու համար անհրաժեշտ փաստը՝ **վիրավորանքի կամ զրպարտության մասին հայցվորի տեղեկացված լինելու** առկայությունը:

Որպես կանոն, դա **հրապարակման օրն** է, մյուս կողմից՝ օբյեկտիվորեն տուժողին է հայտնի կոնկրետ տեղեկատվությունն իրեն հասու լինելու ժամանակը, հետևաբար տուժողի կողմից այլ բան ապացուցված չլինելու դեպքում հայցային վաղեմության սկիզբ է համարվում համապատասխան տեղեկատվության հրապարակման օրը:

Հայցվորի կողմից հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման համար անհրաժեշտ փաստերի ապացուցումը կարող է իրականացվել այնպիսի ապացույցներով, որոնք առավել հավանական են դարձնում կոնկրետ փաստի գոյությունը: Եթե ապացուցման պարտականություն կրող կողմը ներկայացրել է բացառապես անուղղակի ապացույցներ, որոնք իրենց համակցության մեջ առավել հավաստի են դարձնում հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը, ապա նման ապացույցները չեն մերժվի զուտ այն հիմքով, որ ուղղակի ապացույցներ չեն:

Անուղղակի ապացույցների վերաբերյալ այս մոտեցումը սահմանվել է Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/3124/02/11 գործով որոշման մեջ, որում դատարանը մեկնաբանելով հայցային վաղեմության երկու տարրերի՝ մեկամսյա և վեցամսյա ժամկետների կիրառությունը, ժամկետների ապացուցման բեռը, հայցային վաղեմության ժամկետի բաց թողած լինելու կամ չլինելու ապացուցման պարտականությունը, սահմանել է հետևյալը.

*Հայցային վաղեմության ժամկետը բաց թողած լինելու կամ չլինելու փաստի ապացուցումը … կապված է տուժողի՝ տեղեկացված լինելու հետ: Այս առումով գրեթե անհնար է պատասխանողի (հայցային վաղեմություն վկայակոչող անձի) կողմից այնպիսի ապացույցների ներկայացումը, որոնք կհաստատեն նշված փաստերի առկայությունը: Այսինքն՝ օբյեկտիվորեն տուժողին է հայտնի կոնկրետ տեղեկատվությունն իրեն հասու լինելու ժամանակը, հետևաբար տուժողի կողմից այլ բան ապացուցված չլինելու դեպքում հայցային վաղեմության սկիզբ է համարվում համապատասխան տեղեկատվության հրապարակման օրը:*

*Միաժամանակ հարց է առաջանում, արդյոք բացարձակ առումով պետք է դիտարկել փաստը չապացուցելու հետևանքը նմանատիպ գործերով: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման համար անհրաժեշտ փաստերի ապացուցումը կարող է իրականացվել այնպիսի ապացույցներով, որոնք առավել հավանական են դարձնում կոնկրետ փաստի գոյությունը*»[12]:

---

[11] ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետ:

[12] Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/3124/02/11 գործով 25.12.2012թ. որոշում:

Այդպիսի ապացույց կարող է լինել, օրինակ՝ հայցվորի նամակում այդ փաստի վերաբերյալ կատարված հայտարարությունը, որը նա հղել է պատասխանողին՝ հերքման և/կամ պատասխանի հրապարակման պահանջով. Մասնավորապես՝ *«…ս/թ մայիսի 5-ին ինձ հայտնեցին, որ Ձեր կողմից խմբագրվող կայքի ս/թ ապրիլի 20-ի համարում, «Խմբագրական» վերտառությամբ բաժնում հրապարակվել է «….» վերնագրով հոդված (առանց որոշակի հեղինակի վկայակոչման), որում ինձ վերագրվում է «….» արարք: Հոդվածում ինձ վերագրվող արարքը և դրա առանձին փաստեր չեն համապատասխանում իրականությանը, ուստի պահանջում եմ հերքել դրանք»:*

Այսպիսի իրավակիրառական պրակտիկա Վճռաբեկ դատարանը ձևավորել է ԵԿԴ/3124/02/11 գործով[13] **25.12.**2012թ կայացված որոշմամբ, մասնավորապես.

*«…Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեկամյա ժամկետը, որպես հայցային վաղեմության ժամկետ ներառված լինելով վեցամյա ժամկետում ենթակա է վերականգնման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված կարգով: Մինչդեռ վեցամյա ժամկետի բացթողնման դեպքում այն վերականգնման ենթակա չէ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրական նման ձևակերպումը ենթադրում է, որ վիրավորանքի և զրպարտության դեպքում դրա տարածման մակարդակը նվազում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում, որից հետո առարկայազուրկ է դառնում նման պահանջի ներկայացումը: Մյուս կողմից հատկանշական է այն, որ բոլոր դեպքերում վեցամյա ժամկետում հայցի ներկայացումը դեռևս չի նշանակում հայցային վաղեմության ժամկետի պահպանում, քանի որ այդ դեպքում իմաստազուրկ է դառնում մեկամյա ժամկետի նախատեսումը:*

*Ընդհանրացնելով վերոնշյալ եզրահանգումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության հարց բարձրացնելիս դատարանները նախ և առաջ պետք է գնահատեն վեցամյա ժամկետի պահպանված լինելու հանգամանքը, ապա դրա շրջանակներում անդրադառնան մեկամյա ժամկետի պահպանված լինելու հարցին:*

*Սույն գործի շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե ով է կրում հայցային վաղեմության ժամկետում հայց ներկայացված լինելու փաստն ապացուցելու բեռն այն դեպքում, երբ պատասխանող կողմը միջնորդել է կիրառել հայցային վաղեմություն:*

*Հայցային վաղեմության ժամկետը բաց թողած լինելու կամ չլինելու փաստի ապացուցումը վիրավորանքի և զրպարտության հետևանքով պատճառված վնասների հատուցման գործերով առանձնահատուկ է այնքանով, որքանով ժամկետի հաշվարկման սկիզբը կապված է տուժողի՝ տեղեկացված լինելու հետ: Այս առումով գրեթե անհնար է պատասխանողի (հայցային վաղեմություն վկայակոչող անձի) կողմից այնպիսի ապացույցների ներկայացումը, որոնք կհաստատեն նշված փաստերի առկայությունը: Այսինքն՝ օբյեկտիվորեն*

[13] Վճռաբեկ դատարանի Գեղամ Գալստյանի, Նորիկ Պետրոսյանն ընդդեմ Պարույր Հայրիկյանի՝ պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկությունները հերքելու և գումարը փոխհատուցելու պահանջների մասին ԵԿԴ/3124/02/11 գործով 25.12.2012թ. որոշում:

*տուժողին է հայտնի կոնկրետ տեղեկատվությունն իրեն հասու լինելու ժամանակը, հետևաբար տուժողի կողմից այլ բան ապացուցված չլինելու դեպքում հայցային վաղեմության սկիզբ է համարվում համապատասխան տեղեկատվության հրապարակման օրը»:*

## 3.3. Արտադատական կարգով իրավական պաշտպանության միջոցի դիմելու և պահանջի բավարարված լինելու ապացուցման բեռը

Զրպարտության կամ վիրավորանքի հետևանքով ծագող հարաբերությունը դադարում է, երբ լրատվական գործունեություն իրականացնողը տուժողի պահանջով հրապարակում է հերքում կամ տուժողի պատասխանը:

Այն դեպքում, երբ անձի պատիվն ու արժանապատվությունն արատավորող արտահայտությունը տարածվել է ԶԼՄ-ով, և անձը մինչև դատական պաշտպանության միջոցի դիմելը՝ հերքման և/կամ պատասխան հրապարակելու պահանջով դիմել է ԶԼՄ-ին, ու պահանջը բավարարվել է, ապա լրագրողը, հրապարակախոսը, ԶԼՄ-ն իրավունք ունեն դատարանից պահանջել հայցը մերժել՝ հայց ներկայացնելու իրավունք չունենալու հիմքով:

Եթե կողմերի միջև առկա է վեճ հրապարակված հերքման և/կամ պատասխանի պատշաճության՝ օրենքով նախատեսված պահանջների պահպանված լինելու շուրջ, ապա վերջինիս հիմքում ընկած փաստերի ապացուցման բեռը կրում է հայցվորը:

Այդ դեպքում հերքում և/կամ պատասխան հրապարակված լինելու և օրենքի պահանջների պահպանմամբ հրապարակած լինելու փաստերի ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը՝ լրագրողը, հրապարակախոսը, զանգվածային լրատվամիջոցը:

## 3.4. Արտահայտության հրապարակային եղանակով արված լինելու ապացուցման բեռը

Արտահայտության հրապարակային ձևով կատարված լինելու փաստի ապացուցման դատավարական բեռը կրում է հայցվորը [14]: Տես՝ Վճռաբեկ դատարանի որոշումը ԱՎԴ/0179/02/13 քաղաքացիական գործով:

## 3.5. Արտահայտության արատավորող լինելու ապացուցման բեռը

Արտահայտության արատավորող լինելու փաստի ապացուցման դատավարական բեռը կրում է հայցվորը[15]:

Պետք է պարզել՝ արդյոք տեղեկությունը [օբյեկտիվորեն] **արատավորող է,** թե որպես այդպիսին է ընկալում հայցվորը:

---

[14] Վճռաբեկ դատարանի № ԱՎԴ/0179/02/13 քաղաքացիական գործով 08.05.2014թ. որոշում՝ Անիկ Դավթյանն ընդդեմ Տիգրան Վիրաբյանի՝ պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման, դատական ծախսերի՝ ներառյալ մատուցված փաստաբանական ծառայությունների վճարի բռնագանձման պահանջների մասին:

[15] Վճռաբեկ դատարանի Անիկ Դավթյանն ընդդեմ Տիգրան Վիրաբյանի՝ պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման, դատական ծախսերի՝ ներառյալ մատուցված փաստաբանական ծառայությունների վճարի բռնագանձման պահանջների մասին№ ԱՎԴ/0179/02/13 քաղաքացիական գործով 08.05.2014թ. որոշում:

Որոշելու համար, թե արդյոք տեղեկությունն օբյեկտիվորեն արատավորում է անձի պատիվն ու արժանապատվությունը, հայաստանյան դատարանները կիրառել են հետևյալ չափանիշները:

*«Օրենսդիրը պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունների անգամ մոտավոր ցանկ չի սահմանում, թողնելով, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը, ելնելով ձևավորված բարոյական նորմերից, գործարար սովորույթներից, տարածված տեղեկությունների արժեքավորման հասարակական պատկերացումներից, որոշի տեղեկությունների բնույթը և դրանք հերքելու անհրաժեշտությունը: Եթե տարածված տեղեկությունները հանրության կողմից դատապարտելի կամ պարսավելի են, ապա այդպիսիք համարվում են արատավորող[16]»:*

*«Պատիվը, արժանապատվությունը կոնկրետ ֆիզիկական անձի որակների (հատկանիշների) մասին ձևավորված կարծիքն է հասարակության մեջ[17]»:*

Դատարանները կիրառում են դատական ճանաչողության օբյեկտիվ թեստեր՝ օբյեկտիվ իրականությունից բխող գնահատողական հիմքեր (օրինակ՝ «անձի սոցիալական գնահատական», «ձևավորված բարոյական նորմեր», «գործարար սովորույթներ», «արժեքավորման հասարակական պատկերացումներ» և այլն): Տեղեկության արատավորող բնույթի լինելը որոշվում է՝ անկախ երևույթների նկատմամբ հայցվորի սեփական ընկալումից: Օրինակ, *Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր» խմբագրություն ՍՊԸ* գործով (քաղ. գործ թիվ ԵԿԴ/0261/02/11) դատարանն օբյեկտիվորեն արատավորող բնույթի չի համարել հետևյալ փաստացի տվյալները՝ *«ինքնաթիռով զեղեցկուհիներ է բերում-տանում»*, *«հայտնի է որպես կազինոների մշտական հաճախորդ»*, *«ծեծ է կերել և ամեն անգամ ծեծ ուտելուց հետո ամիսներով բուժվում է և չի հաճախում Ազգային ժողովի նիստերին»*, *«անցնող նստաշրջանում միայն մեկ անգամ է երևացել Ազգային ժողովի միջանցքներում»:*

Օբյեկտիվ թեստի կիրառման օրինակ՝ Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ («Ժամանակ» օրաթերթ) գործով (քաղ. գործ № ԵԿԴ/2293/02/10), դատարանն արատավորող չի համարել այնպիսի արարքի մասին կատարված արտահայտությունը, որը օրենքով թույլատրված իրավահարաբերություն է, մասնավորապես.

*«...Հայցվորի պնդումները՝ Հոդված 2-ում հրապարակված տեղեկությունները նս զրպարտություն համարելու մասին, հիմնավոր չեն, քանի որ դրանք այդպիսին գնահատվելու համար՝ ա) պետք է արատավորեն պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը, բ) այդ տեղեկությունները չպետք է համապատասխանեն իրականությանը, գ) դրանք պետք է ներկայացվեն հրապարակային:*

---

[16] Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ («Ժամանակ» օրաթերթ), քաղ. գործ № ԵԿԴ/2293/02/10:

[17] Վերաքննիչ քաղաքացիական դատարանի Գևորգ Հայրապետյանն ընդդեմ Մուլտի Մեդիա Գրուպ ՓԲԸ ԵԱԴԴ/0003/02/11 գործով 15.09.2011թ. որոշում:

*Տվյալ դեպքում պատասխանողը Հոդված 2-ի վերտառությունում հարց է ուղղում ընթերցողին (հոդվածը վերնագրված է. «Դրն Մանասերյան, $40.000 տոկոսով չե՞ք տվել»), այնուհետև հոդվածի տեքստում շարադրում որոշակի տեղեկություններ, որոնք արատավորող գնահատվել չեն կարող, քանի որ փոխառությամբ տրված գումարից տոկոսներ ստանալու իրավունքը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածի 2-րդ կետում: Այսինքն, Հոդված 2-ում պատասխանողի կողմից նշվել է հայցվորի՝ քաղաքացիաիրավական հարաբերության մասնակից լինելու հանգամանքը:*

*… «տոկոսով փող տալու» հանգամանքը չի կարող դիտվել և գնահատվել անձի՝ պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկություն:*

…

*Հաստատված համարելով Հոդված 2-ում բերված տեղեկությունների արատավորող չլինելու փաստը՝ դատարանը գտնում է, որ հայցը՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 8-րդ կետի կարգով Հոդված 2-ի մասով հերքում և փոխհատուցում պահանջելու վերաբերյալ, ենթակա է մերժման»:*

Այսինքն՝ քանի որ փոխառությամբ տված գումարից տոկոսներ ստանալու երևույթը օրենքով արգելված զանցանք կամ հանցանք չէ, հետևաբար դրա վերաբերյալ լրատվությունը չի կարող օբյեկտիվորեն ունենալ արատավորող բնույթ՝ անկախ այն հանգամանքից, թե այդ տեղեկությունը համապատասխանում է իրականությանը, թե ոչ և անկախ այն հանգամանքից, թե արդյոք նման իրավահարաբերությանը մասնակից լինելը հանրության կամ հայցվորի կողմից կարո՞ղ է դիտվել բացասական լույսի ներքո:

## 3.6. Արտահայտության վիրավորական լինելու ապացուցման բեռը

Արտահայտությունները տարանջատելու, դրանց զրպարտչական կամ վիրավորական լինելու ապացուցման բեռը կրում է հայցվորը:

Վիրավորական արտահայտության՝ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ հետապնդելու, կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունեցած լինելու ապացուցման բեռը ևս կրում հայցվորը:

Վերոգրյալ երկու հատկանիշների միաժամանակյա առկայությունը պարտադիր է, որպեսզի պատասխանողի համար ծագի իր կողմից ապացուցման ենթակա փաստերի ապացուցման պարտականությունը:

«*…Սահմանադրական դատարանը գտնում է, որ տեղեկատվության հրապարակման դրդապատճառների ուսումնասիրությունը մեծ կարևորություն ունի յուրաքանչյուր կոնկրետ գործով տեղեկատվության հրապարակման իրավաչափության և համապատասխան արարքի (գործողության) իրավաբանական որակման հարցը գնահատելիս: Չի կարող իրավաչափ համարվել այն գործողությունը, որն ի սկզբանե նպատակ է հետապնդել վնաս պատճառել անձին, կամ երբ տեղեկություններ տարածողն անփութություն է դրսևորել՝ չստուգելով դրանց իսկությունը*»[18]:

---

[18] Սահմանադրական դատարանի 15.11.2011թ. ՍԴՈ-997 որոշում §§ 7, 8:

*« ... արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա: Մասնավորապես՝ նման նպատակի առկայության մասին կարող է վկայել այնպիսի իրավիճակը, երբ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին: Այս փաստի ապացուցման բեռը նույնպես կրում է հայցվորը»*[19]:

Վերոգրյալ երկու հատկանիշների միաժամանակյա առկայությունը պարտադիր է, որպեսզի պատասխանողի համար ծագի իր կողմից ապացուցման ենթակա փաստերի ապացուցման պարտականությունը:

## 3.7. Արտահայտության զրպարտող լինելու ապացուցման բեռը

Զրպարտության վերաբերյալ գործերի քննության ընթացքում գործում է այն կանխավարկածը, որ փաստերի՝ իրականությանը համապատասխանելու ապացուցման բեռը կրում է պատասխանողը: Այս ընդհանուր կանոնից բացառություն է միայն այն դեպքը, երբ ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր: Այս պարագայում ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը, սակայն միայն այն դեպքում, երբ պատասխանողը կհիմնավորի (կապացուցի) իրենից պահանջվող գործողությունների և ջանքերի ոչ ողջամիտ լինելը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին: Եթե նույնիսկ պատասխանողից պահանջվող գործողությունները կամ ջանքերը ոչ ողջամիտ են, սակայն հայցվորը կապացուցի, որ անհրաժեշտ ապացույցներին ինքը չի տիրապետում, ապա այս դեպքում եւս ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը:

Վիճարկվող փաստերի՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքի հաստատումը պատասխանողին (ենթադրյալ վնաս պատճառողին) ազատում է պատասխանատվությունից, հետևաբար՝ հանգեցնում է ենթադրյալ պարտավորության դադարման[20]:

## 3.8. «Գերակա հանրային շահի» ապացուցման բեռը

Հրապարակումը «գերակա հանրային» շահով պայմանավորված լինելու փաստի ապացուցման բեռը, ստորև շարադրված ծավալով և հերթականությամբ, կրում է պատասխանողը:

Իրավադրույթում *գերակա հանրային շահով* պայմանավորված լինելու պայմանն ունի գերակշռող ազդեցություն, իսկ մյուս պայմանները՝ *ճշմարտությունը և*

---

[19] Վճռաբեկ դատարանի 27.04.2012թ. «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի Թաթուլ Մանասերյանի ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի՝ զրպարտությունը հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջների մասին քաղաքացիական № ԵԿԴ/2293/02/10 գործով որոշում:

[20] Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ («Ժամանակ» օրաթերթ), քաղ. գործ № ԵԿԴ/2293/02/10:

*հիմնավորվածությունը պարզելը ու հավասարակշռված և բարեխղճորեն ներկայացնելը* ունեն լրացուցիչ բնույթ և լրացնում են այդ պայմանին՝ այդպիսով ամբողջացնելով տեղեկությունը զրպարտություն չդիտելու հիմքը: Հետևաբար՝ հիշատակված դրույթի «ճշմարտությանը և հիմնավորվածության պարզած լինելն» ու «հավասարակշռված և բարեխղճորեն ներկայացրած լինելու» պայմաններն ինքնուրույն գործել չեն կարող:

«Գերակա հանրային շահ» եզրույթում օգտագործվող «գերակա» ածականը բնութագրում է հրապարակվող տեղեկատվության հրատապությունը, այդ տեղեկատվության սոցիալական անհրաժեշտությունը: Դատարանները նշված եզրույթը գնահատելիս օգտվում են որոշակի հայեցողությունից և կոնկրետ դեպքում պետք է որոշեն, թե արդյոք այս կամ այն տեղեկատվությունը պայմանավորվա՞ծ է եղել սոցիալական անհրաժեշտությամբ, թե՞ այն զուտ մասնավոր բնույթ է կրել:

Վճռաբեկ դատարանը ԵԿԴ/0807/02/11 գործով 04.07.2013թ որոշման մեջ[21] ընդգծել է, որ մամուլում հրապարակվող ցանկացած տեղեկություն չի կարող բավարարել այս պայմանին, քանի որ տեղեկությունները հաճախ կրում են մասնավոր բնույթ և չունեն հանրային լայն հետաքրքրություն:

Ի տարբերություն վիրավորանքի, երբ տեղեկատվության՝ գերակա հանրային շահով պայմանավորված լինելու հանգամանքի առկայությունը բացառում է տվյալ տեղեկատվությունը վիրավորանք համարելը, զրպարտության դեպքում անհրաժեշտ է լրացուցիչ փաստական կազմի առկայություն:

Փաստացի տվյալներ հրապարակած անձը պետք է ապացուցի, որ մինչ հրապարակելը ձեռնարկել է այնպիսի միջոցներ, որոնք **հնարավորություն են ընձեռել վերջինիս հանգելու հետևության** այն մասին, որ փաստացի այդ տվյալները պայմանավորված են հանրային գերակա շահով և կարող էին (հավանական է, չի բացառվում) համապատասխանել հրապարակմանը:

Բացի այդ, հրապարակող անձը պետք է նշված տվյալները բացահայտի բարեխիղճ և հավասարակշռված: Բարեխղճությունը ենթադրում է տեղեկատվության (փաստացի տվյալի (տվյալների)) ամբողջական, առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման շարադրանք:

Հավասարակշռվածություն պետք է լինի ներկայացվող փաստացի տվյալների և գերակա հանրային շահի հարաբերակցության առումով: Փաստացի տվյալների հրապարակումը, պայմանավորված լինելով գերակա հանրային շահով, չպետք է պարունակի զրպարտող այլ տեղեկություններ, որոնք չեն առնչվում տվյալ խնդրին[22]:

«Մինչև տեղեկությունների հրապարակումը միջոցներ ձեռնարկելու» պահանջը նպատակ ունի ստանալ երկու հարցի պատասխան: Նախ, արդյոք հրապարակվող տեղեկատվությունը բխո՞ւմ է հանրային գերակա շահից, հանրությունն արդյո՞ք հետաքրքրված է նման տեղեկատվությամբ և սպասո՞ւմ է դրան: Երկրորդ՝ հրապարակվող տեղեկությունները համապատասխանո՞ւմ են իրականությանը, թե՞ ոչ:

Տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելը ճշտելու պարտականությունը չպետք է կատարված լինի ֆորմալ: «Գերակա հանրային շահ»-ի

[21] Վճռաբեկ դատարանի Մարգարիտա Խաչատրյանի ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի՝ 21.04.2011թ «Հրապարակ» օրաթերթի 73(684) համարի 1-ին էջում հրապարակված հոդվածի հերքումն «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի կողմից տպագրելու պահանջի մասին ԵԿԴ/0807/02/11 գործով 04.07.2013թ. որոշում:

[22] Վճռաբեկ դատարանի 27.04.2012թ. «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի Թաթուլ Մանասերյանի ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի՝ զրպարտությունը հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջների մասին քաղաքացիական № ԵԿԴ/2293/02/10 գործով որոշում:

դրույթի պաշտպանությունից չեն կարող օգտվել այն սուբյեկտները (լրագրողներ, հրապարակախոսներ, ԶԼՄ-ներ), ովքեր բավարարվել են զուտ տեղեկատվության իրական լինելը ճշտելու պահանջի ձևական պահպանմամբ և թեկուզև ստանալով հրապարակվող նյութի՝ իրականությանը չհամապատասխանելու վերաբերյալ տեղեկություն՝ հրապարակել են այն: Վճռաբեկ դատարանը ԵԿԴ/0807/02/11 գործով 04.07.2013թ. որոշմամբ[23] արձանագրել է.

*«Ինքնանպատակ կլիներ օրենսդրական նման կարգավորումը, եթե քննարկվող դրույթն ընկալվեր բացառապես տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու ճշտումը կատարելու ֆորմալ պարտականություն: Դրույթի նման մեկնաբանումը և կիրառումը կարող է հանգեցնել ցանկացած տեղեկատվության հրապարակման, թեկուզև անձը, ում վերաբերյալ հրապարակվում է տեղեկատվությունը, նախապես հերքել է այն: Հետևաբար՝ քննարկվող դրույթի պաշտպանությունից չեն կարող օգտվել այն սուբյեկտները (լրագրողներ, հրապարակախոսներ, ԶԼՄ-ներ), ովքեր բավարարվել են զուտ տեղեկատվության իրական լինելը ճշտելու պահանջի ձևական պահպանմամբ և թեկուզև ստանալով հրապարակվող նյութի՝ իրականությանը չհամապատասխանելու վերաբերյալ տեղեկություն՝ հրապարակել են այն»*:

## 3.9. Նյութական և ոչ նյութական վնասի չափի ապացուցման բեռը

Զրպարտության և վիրավորանքի գործով հայցվոր կողմն է կրում թե՛ նյութական, և թե՛ ոչ նյութական վնասի հատուցման գումարի չափի և կառուցվածքի ապացուցման բեռը: Նույն հրապարակման մեջ մեկից ավելի զրպարտող և վիրավորական արտահայտությունների առկայության դեպքում, եթե հայցվորը դրանցից յուրաքանչյուրի դիմաց պահանջում է առանձին փոխհատուցում, ապա յուրաքանչյուրի համար ապացուցման բեռը կրում է առանձին-առանձին[24]:

Այդպիսի հստակեցում պետք է ներկայացվի հայցում կամ ոչ ուշ՝ քան նախնական դատաքննության ժամանակ՝ նախքան դատաքննությունը: Այդ կատարելու հնարավորությունը բաց թողնելու լինելու դեպքում՝ բացասական իրավական հետևանքները կրում է հայցվոր կողմը: Մյուս պայմանների բավարարման դեպքում՝ վճռով կարող է հաստատվել իրավունքի խախտման փաստը, սակայն փոխհատուցման ենթակա գումարի չափի և կառուցվածքի ապացուցված չլինելու պայմաններում՝ այդ պահանջը կմերժվի:

Հայցվորը պետք է ապացուցի, թե հայցապահանջի բռնազանձում պահանջվող գումարը «փոխհատուցո՞ւմ» է, թե՞ «գույքային վնաս», դրանք պահանջում է, որպես իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող գործողություններից պաշտպանվելու միջոց, թե՞ որպես վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով իր կրած նյութական բնույթի զրկանքների վերականգնման միջոց:

---

[23] Վճռաբեկ դատարանի Մարգարիտա Խաչատրյանն ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի՝ 21.04.2011թ. «Հրապարակ» օրաթերթի 73(684) համարի 1-ին էջում հրապարակված հոդվածի հերքումը «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի կողմից տպագրելու պահանջի մասին ԵԿԴ/0807/02/11 գործով 04.07.2013թ. որոշում:

[24] Սահմանադրական դատարանի 15.11.2011թ. ՍԴՈ-997 որոշում § 9:

Եթե հայցվոր կողմը օրենքով նախատեսված ոչ նյութական հատուցման (ներողություն խնդրելուն, հերքում տարածելուն պարտավորեցնելուն) պահանջներից բացի ներկայացրել է նաեւ դրամական «փոխհատուցման» պահանջ, ապա պետք է ապացուցի նաև, թե ինչու առաջինը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար: Ուշագրավ է Սահմանադրական դատարանի մոտեցումը.

«*…արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևերը: Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով, և նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար*»[25]:

Դատարան իր հերթին պետք է գնահատի և ապահովի հավասարակշռությունը՝ մի կողմից՝ դրամական բռնագանձման ձևով արտահայտվելու ազատությանը միջամտության և մյուս կողմից՝ այդ միջամտությամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև (տվյալ դեպքում՝ անձի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու նպատակի): Դատարանը պետք է գնահատի նաեւ համաչափությունը՝ վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող պատասխանատվության և անձի պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասի միջև[26]:

## 4. ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋ

Վնասի դիմաց քաղաքացիաիրավական պատասխանատվությունը տարանջատված է «փոխհատուցման» և «գույքային վնասի» ինստիտուտների:

**Փոխհատուցման** պահանջը դատական կարգով պաշտպանվելու միջոց է:

**Գույքային վնասը**՝ անձի կրած նյութական բնույթի զրկանքներն են, կորուստը, այդ թվում՝ դատական ծախսերը, խախտված իրավունքների վերականգնման համար կատարած ողջամիտ ծախսերը, որոնք համապատասխան փաստերով դատարանում ենթակա են հիմնավորման և վերականգնման:

**Փոխհատուցման չափը** որոշում է դատարանը՝ ելնելով կոնկրետ գործի առանձնահատկություններից, այդ թվում՝ վիրավորանքի կամ զրպարտության եղանակից և տարածման շրջանակից, ինչպես նաև վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունից:

**Փոխհատուցման, ինչպես նաև գույքային վնասի** հատուցման հարցը դատարանը քննում է բացառապես այն անձի պահանջով, ում պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել է:

**Փոխհատուցման** չափը որոշելիս դատարանը հաշվի չի առնում վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով անձին պատճառված գույքային վնասը:

Մարդու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու դիմաց փոխհատուցումը **չպետք է շփոթել գույքային վնասի հետ,** և այդ փոխհատուցումը **չպետք է դիտել որպես տույժի կամ տուգանքի ձևով սահմանվող պատիժ:**

---

[25] Սահմանադրական դատարանի 15.11.2011թ. ՍԴՈ-997 որոշում § 11:

[26] Steel-ը և Morris-ն ընդդեմ Միացյալ Թագավորության - 68416/01 վճիռ 15.2.2005թ.:

Փոխհատուցման չափը սահմանելիս պետք է հաշվի առնել **վիրավորանքի կամ զրպարտության եղանակը և տարածման շրջանակը, ինչպես նաև վիրավորողի կամ զրպարտողի** գույքային դրությունը: Գույքային դրությունը հաշվի առնելու պահանջը, մասնավորապես, ենթադրում է.

– հաշվի առնել պատասխանողի եկամուտների չափը,
– թույլ չտալ պատասխանողի համար անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա նրա գործունեության համար:

Զրպարտության և վիրավորանքի գործերով հայցվորն իրեն հրապարակայնորեն զրպարտողից և/կամ վիրավորողից կարող է պահանջել բռնագանձել գումար՝ **փոխհատուցում**, որպես իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող գործողություններից պաշտպանվելու միջոց և **գույքային վնաս**, որպես վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով կրած նյութական բնույթի զրկանքների **վերականգնման** միջոց:

Ցանկացած այլ նպատակով վնասի փոխհատուցումն օգտագործելն անթույլատրելիորեն սահմանափակող ազդեցություն կունենա ազատ արտահայտվելու իրավունքի վրա, ինչը չի կարող գնահատվել որպես հիմնավորված անհրաժեշտություն ժողովրդավարական հասարակությունում[27]:

Հայցվորը փոխհատուցման չափը հիմնավորելու համար կարող է դատարան ներկայացնել պատասխանողի գույքային դրությունը բնութագրող ապացույցներ (տեղեկանքներ, հայտարարագրեր) կամ հղում կատարել հանրամատչելի աղբյուրների, իսկ նման ապացույցներ ձեռք բերելու փորձերի անհաջողության դեպքում՝ միջնորդություն ներկայացնել դատարան, որպեսզի վերջինս ապահովի այդ ապացույցները:

Պատասխանողն իր հերթին կարող է դատարան ներկայացնել իր գույքային դրությունը բնութագրող ապացույցներ՝ պահանջվող փոխհատուցման չափի անհամաչափությունը հիմնավորելու համար:

Այն դեպքում, երբ վեճը ծագել է առողջապահության և բնապահպանության հրատապ թեմաների շուրջ բանավեճ ծավալող խմբի կողմից կատարած հայտարարությունների պատճառով, ապա դատարանը փոխհատուցման չափը որոշելիս պետք է հաշվի առնի նաև մյուսների վրա գումարի մեծության հնարավոր «սառեցնող» ազդեցությանը: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը Սթիլն ու Մորիսը ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում արձանագրել է, որ ժողովրդավարական հասարակությունում շահերի պաշտպանության ցանկացած մեծ կամ փոքր ոչ ֆորմալ խումբ, ինչպիսին London Greenpeace-ն էր, պետք է հնարավորություն ունենա իր գործունեությունը արդյունավետ կերպով ծավալել: Հասարակական հետաքրքրությունը առողջապահության և բնապահպանության հրատապ թեմաների շուրջ բանավեճ ծավալող այսպիսի խմբերի և անհատների գործունեության համար հնարավորություններ ստեղծելու նկատմամբ մեծ է: Դատարանը եզրահանգել է, որ որքան ավելի համընդհանուր լինի հզոր առևտրային կազմակերպությունների գործունեության մասին տեղեկատվություն և գաղափարների տարածման հանրային հետաքրքրությունը, այնքան ավելի կարևոր է ուշադրություն դարձնել մյուսների վրա զրպարտության համար վնասի փոխհատուցման «սառեցնող» ազդեցությանը, որն այս համատեքստում նույնպես կարևոր գործոն է[28]:

---

[27] Սահմանադրական դատարանի 15.11.2011թ. ՍԴՈ-997 որոշում § 9:
[28] Steel-ը և Morris-ն ընդդեմ Միացյալ Թագավորության - 68416/01 վճիռ 15.2.2005թ, § 95:

# ԳԼՈՒԽ III.
# ՆՅՈՒԹԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

## 1. ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

### 1.1. «Զրպարտություն» հասկացությունը

«Զրպարտություն» հասկացությունը օրենքում[29] սահմանված է հետևյալ կերպ.

**«Զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»:**

### 1.2. Չորս նախապայմաններ

Անհրաժեշտ է ցույց տալ չորս նախապայմանների [30] առկայություն, որպեսզի արտահայտությունը համարվի զրպարտող: Այդ նախապայմաններն են.

1) հայտարարությունը պետք է լինի **փաստի** մասին (փաստացի տվյալներ),
2) հայտարարությունը պետք է ներկայացված լինի **հրապարակային** եղանակով,
3) հայտարարությունը պետք է **չհամապատասխանի** իրականությանը,
4) հայտարարությունը պետք է լինի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն **արատավորող**:

Սահմանադրական դատարանը 15.11.2011թ. ՍԴՈ-997 որոշման մեջ առանձնացրել է ևս մեկ հատկանիշ՝ հայտարարությունը պետք է անձին մեղադրի հանցանքի կամ զանցանքի մեջ, այսինքն՝ անձին վերագրվող արարքը պետք է արգելված լինի քրեական, մաքսային կամ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով[31]:

Նշված պայմաններից որևէ մեկի բացակայությունը բացառում է զրպարտության առկայությունը:

**1) Փաստի մասին հայտարարություն**

Մեկնաբանվում է որպես հայտարարություն, որն իր մեջ պարունակում է անձի մասին «փաստացի տվյալներ», որն էլ մեկնաբանվում է որպես կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ: Ընդ որում, այդ տեղեկությունները չպետք է լինեն վերացական, այլ կոնկրետ[32]:

---

[29] ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ-րդ հոդվածի 3-րդ մաս:
[30] Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով որոշում, տե՛ս էջ 8:
[31] Սահմանադրական դատարանի 15.11.2011թ. ՍԴՈ-997 որոշում § 11, 11-րդ պարբ:
[32] Տե՛ս նույն որոշումը, էջ 9, վերջին պարբերություն:

Զրպարտություն եզրույթը վիրավորանք եզրույթից տարբերվում է նրանով, որ առաջինը, որպես կանոն, մատնանշում է գործողություն, իսկ երկրորդը՝ հատկանիշ, պիտակ: Օրինակ, եթե որևէ մեկը հայտարարում է, որ մեկ այլ անձ գողացել է իր գրիչը կամ թմրանյութ է վաճառում, ապա դա զրպարտող բնույթի հայտարարություն է (մատնանշում է գործողություն), իսկ եթե հայտարարում է, որ այդ անձը գող է, դա վիրավորանք է (պիտակ, գնահատական):

## 2) Հրապարակային հայտարարություն

Հրապարակային է այն արտահայտությունը (կամ ներկայացված փաստերը), որը կատարվել է առնվազն երրորդ անձի **ներկայությամբ**, իսկ եթե հայտարարությունը կատարվել է ռադիոյի, հեռուստատեսության, համացանցի և կապի ու լրատվության այլ միջոցներով, ապա երրորդ անձին **հաղորդակից** դարձնելով: Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2293/02/10 գործով որոշումը[33]:

Այսինքն, անհրաժեշտ է, որպեսզի երրորդ անձը կա՛մ ներկա լինի հայտարարության կատարման պահին, կա՛մ հայտարարության կատարման պահին հաղորդակից դարձվի այդ հայտարարությանը: Ընդ որում, կարևոր է հաշվի առնել ժամանակի (այլ ոչ թե տարածքի) տիրույթում երրորդ անձի առկայության և հայտարարության կատարման պահի **համաժամանակյա** լինելը՝ երրորդ անձը պետք է հաղորդակից դարձած լինի հայտարարությանը այն կատարելու **պահին,** և ոչ՝ դրանից հետո:

Օրինակ, եթե Ա անձը Բ անձին որևէ տեղեկություն է հաղորդում (առանց երրորդ անձի ներկայության), իսկ որոշ ժամանակ անց Ա անձը նույն տեղեկությունը հայտնում է Գ անձին (կրկին առանց անձի ներկայության), ապա ո՛չ առաջին, և ո՛չ երկրորդ դեպքում Ա-ի կողմից հնչեցված հայտարարությունները հրապարակային չեն, քանի որ երկու դեպքում էլ հայտարարության հնչեցման պահին ներկա չի եղել կամ հաղորդակից չի դարձվել որևէ երրորդ անձ: Այս իմաստով հնարավոր էլ չի պնդել, որ Գ-ն երրորդ անձ է Ա-ի և Բ-ի համեմատ, քանի որ Գ-ն ներկա չի եղել կամ հաղորդակից չի դարձել այն ՊԱՀԻՆ, երբ Ա-ն կատարել է վիճահարույց հայտարարությունը Բ-ին:

Արտահայտությունները երրորդ անձի ներկայությամբ կատարված են համարվում նաև այն դեպքում, երբ երկու անձ միասին վիրավորում կամ զրպարտում են միևնույն անձին[34]:

«Մեկ երրորդ անձ» չափանիշը կիրառելի է նաև համացանցի նկատմամբ: Հետևաբար, համացանցում տեղադրված հայտարարությունը կամ սոցիալական ցանցում տեղադրված ստատուսը հրապարակային հայտարարություն է, եթե առնվազն երրորդ անձ հաղորդակից է դարձվում այդ հայտարարությանը: Թիվ ԵԱԴԴ/0074/02/12 քաղաքացիական գործով վճռում Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը ներմուծել է «հասանելի է բոլորին» եզրույթը, ըստ որի՝ սոցիալական ցանցերում բոլորին հասանելի եղանակով տեղադրված հայտարարությունը հրապարակային հայտարարություն է[35]: ՏՎԽ-ն կարծում է, որ «հասանելի է բոլորին» չափորոշիչը «մեկ

---

[33] Տե՛ս առավել մանրամասն Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2293/02/10 որոշման 8-րդ էջի վերջում և 9-րդ էջի սկզբում, ինչպես նաև 9-րդ էջի 2-րդ պարբերության հատակ ձևակերպումը:

[34] Վճռաբեկ դատարանի ԱՎԴ/0179/02/13 քաղաքացիական գործով 08.05.2014թ. որոշում՝ Անիկ Դավթյանն ընդդեմ Տիգրան Վիրաբյանի՝ պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման, դատական ծախսերի՝ ներառյալ մատուցված փաստաբանական ծառայությունների վճարի բռնագանձման պահանջների մասին: Տե՛ս էջ 9, պարբ. 6:

[35] Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան թիվ ԵԱԴԴ/0074/02/12 քաղաքացիական գործով վճիռ, էջ 8, պարբ. 2:

երրորդ անձ» չափորոշիչի առավել նպատակահարմար տարբերակն է՝ համացանցի տիրույթի համար:

«Հրապարակային հայտարարություն» հասկացության վերը նշված կանոններից սահմանված է մեկ բացառություն, ըստ որի՝ հաղորդակցության տարբեր Հրապարակային ելույթից, պատասխանից կամ դրանց հիման վրա կազմված փաստաթղթերից բխող արտահայտություններ

Հայտարարությունը հասցեատիրոջը ներկայացնելը չի համարվի հրապարակային, եթե հայտարարությունը ներկայացնող անձը բավականաչափ միջոցներ է ձեռնարկել դրանց գաղտնիությունը ապահովելու ուղղությամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնան այլ անձանց[36]:

Հայտարարությունը, որը կատարվել է առանց երրորդ անձի ներկայության կամ նրան հաղորդակից դարձնելու, ոչ հրապարակային հայտարարություն է: Ոչ հրապարակային եղանակով կատարված վիրավորական կամ զրպարտող բնույթի հայտարարությունների դեմ իրավական պաշտպանության միջոցներ սահմանված չեն ՀՀ օրենսդրությամբ: Սա իրավական բաց է, որին անդրադարձել է Սահմանադրական դատարանը ՍԴՈ-997 որոշման մեջ, ինչպես նաև ՏՎԽ-ն իր թիվ 32 որոշմամբ:

### 3) Իրականությանը չհամապատասխանող հայտարարություն

Այս պահանջը պետք է հասկանալ բառի սովորական իմաստով: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ այդպիսին են սուտ, անհիմն կամ ոչ հավաստի տեղեկությունները[37]:

### 4) Արատավորող հայտարարություն

Հայտարարությունը ոչ միայն պետք է իրականությանը չհամապատասխանի, այլ նաև իր բնույթով լինի արատավորող: «Արատավորող» հասկացության իմաստը պետք է փնտրել դատական ակտերի մեկնաբանություններում: Ըստ Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0749/02/10 գործով որոշման.

> *«Արատավորող կարող են լինել այնպիսի տվյալները, որոնք բովանդակում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման, տնտեսական կամ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության, գործարար շրջանառության սովորույթների խախտման և այլ տեղեկություններ, որոնք չեն հիմնավորվում վերաբերելի և թույլատրելի ապացույցներով (իրական չեն), նվաստացնում, նսեմացնում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը[38]:*

Ըստ Վճռաբեկ դատարանի մեկ այլ մեկնաբանության՝ ներկայացված թիվ ԱՎԴ/0179/02/13 գործով որոշման մեջ.

---

[36] Տե՛ս Վճռաբեկ դատարանի ԱՎԴ/0179/02/13 որոշումը, էջ 10, պարբ. 2:

[37] Տե՛ս նույն որոշման 11-րդ էջում՝ պարբերություն 4-րդ վերևից:

[38] Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով որոշում, էջ 10, վերջին պարբերություն:

*«Արատավորող արտահայտությունն այն արտահայտությունն է, որը հասարակության անդամների գնահատմամբ նսեմացնում է անձի արժանիքները հանրության շրջանում, նրան ենթարկում է ծաղրուծանակի, ունակ է անձին վերածել ատելության կամ արհամարհանքի առարկայի կամ ստիպում է ամաչել անձին կամ այլ մարդկանց խուսափել տվյալ անձից»*[39]*:*

Առաջին ատյանի դատարանները նույնպես մեկնաբանել են «արատավորող» հասկացությունը: Օրինակ, Կենտրոն և Նորք Մարաշ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը թիվ ԵԿԴ/2293/02/10 գործով վճռում տվել է հետևյալ մեկնաբանությունը.

*«Օրենսդիրը պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունների անգամ մոտավոր ցանկ չի սահմանում, թողնելով, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը, ելնելով ձևավորված բարոյական նորմերից, գործարար սովորույթներից, տարածված տեղեկությունների արժեքավորման հասարակական պատկերացումներից, որոշի տեղեկությունների բնույթը և դրանք հերքելու անհրաժեշտությունը: Եթե տարածված տեղեկությունները հանրության կողմից դատապարտելի կամ պարսավելի են, ապա այդպիսիք համարվում են արատավորող»*[40]*:*

Ըստ մեկ այլ մեկնաբանության՝ սահմանված ԵԿԴ/1963/02/10 գործով վճռում.

*«Արատավորող են համարվում այն տեղեկությունները, որոնք կարող են նսեմացնել քաղաքացու կամ իրավաբանական անձի արժանիքները: Պատիվն անձի օբյեկտիվ գնահատականն է՝ անձի նկատմամբ հասարակության վերաբերմունքը որոշող, ինչպես նաև անհատի բարոյական և այլ վարկանիշների սոցիալական գնահատականն է: Արժանապատվությունն անհատի ներքին ինքնագնահատականն է, անձնական հատկանիշների ընդունակությունների աշխարհայացքի գիտակցումը»*[41]*:*

Եվս մեկ մեկնաբանություն՝ ներկայացված ԵԱԴԴ/0003/02/11 գործով վճռում.

*«Պատիվը անհատի հասարակական գնահատականն է, քաղաքացու որոշ հոգևոր և սոցիալական հատկանիշները: Այն մարդու համար հանդիսանում է այնպիսի բարիք, ինչպիսին է իր կյանքը, առողջությունը և ազատությունը: Մարդն, ով գնահատում է իր պատիվը, հավասարեցնում է այն իր բարի համբավին և խղճին:*

---

[39] Էջ 9, պարբ. 4:

[40] *Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ* («Ժամանակ» օրաթերթ), քաղ. գործ թիվ ԵԿԴ/2293/02/10: Տե՛ս էջ 13, պարբ. 2:

[41] *«Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ-ի* («Ժամանակ» օրաթերթ), քաղ. գործ թիվ ԵԿԴ/1963/02/10, տե՛ս էջ 20:

*Արժանապատվությունը անձի կողմից սեփական հատկանիշների, կարողությունների, աշխարհայացքի, իր վարքի, հասարակական նշանակության գնահատումն է:*

*...Այսինքն՝ պատիվը, արժանապատվությունը կոնկրետ ֆիզիկական անձի որակների (հատկանիշների) մասին ձևավորված կարծիքն է հասարակության մեջ»*[42]:

Այսպիսով, դատարանները կիրառում են դատական ճանաչողության օբյեկտիվ թեստեր՝ հասարակական ընկալման, այլ ոչ թե անձի սուբյեկտիվ ճանաչողության հիման վրա սահմանված գնահատողական չափանիշներ (օրինակ՝ «հանրության կողմից դատապարտելի կամ պարսավելի տեղեկություններ», «ձևավորված բարոյական նորմեր», «գործարար սովորույթներ», «արժեքավորման հասարակական պատկերացումներ», և այլն)[43]:

# 2. Վիրավորանքը

## 2.1. «Վիրավորանք» հասկացությունը

«Վիրավորանք» հասկացությունը օրենքում[44] սահմանված է հետևյալ կերպ.

**«Վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է»:**

Նշվածը մեկնաբանվել է Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/2293/02/10, ԼԴ/0749/02/10 և ԱՎԴ/0179/02/13 քաղաքացիական գործերով որոշումներում, համաձայն որոնց՝ վիրավորանքը կարող է դրսևորվել խոսքով, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր, պատկերների միջոցով (նկարներ, տարածական պատկերներ), ձայնի (ինչպես բանավոր խոսքը, այնպես էլ տարբեր հնչերանգների կիրառումը), նշանների միջոցով (ժեստիկուլյացիաներ, սիմվոլներ): Այս ցանկը բաց է և, ինչպես նշում է Վճռաբեկ դատարանը, վիրավորանքը կարող է արտահայտվել ցանկացած այլ միջոցի օգտագործմամբ, որը ներառված չէ վերոնշյալ թվարկման մեջ[45]: Օրինակ, *Տիգրան Ուրիխանյանն ընդդեմ Էդգար Բարսեղյանի* գործով ՏՎԽ-ի եզրակացության մեջ խնդրո առարկան՝ վերջինիս կողմից համացանցում քաղաքական գործչի ծաղրանկարի հրապարակման հարցն է, որը ՏՎԽ-ն դիտեց քաղաքական երգիծանքի ժանրում: ՏՎԽ-ն իր թիվ 31 կարծիքում նշել է.

«...Երգիծանքը գեղարվեստական խոսքի տեսակ է, ինչպես նաև սոցիալական արտահայտչամիջոց, որն իրեն բնորոշ բոլոր չափազանցություններով, իրականությունը աղավաղված ներկայացնելու, հրահրելու ու սուր

---

[42] Վերաքննիչ քաղաքացիական դատարանի Գևորգ Հայրապետյանն ընդդեմ Մուլտի Մեդիա Գրուպ ՓԲԸ ԵԱԴԴ/0003/02/11 գործով 15.09.2011թ. որոշում, էջ 7:

[43] Թեև պետք է նաև նկատի ունենալ, որ գնահատման դաշտը ի վերջո մնում է դատարանին:

[44] ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ մաս:

[45] Տե՛ս որոշում ԵԿԴ/2293/02/10, էջ 8-9, ԼԴ/0749/02/10, էջ 8-9 և որոշում ԱՎԴ/0179/02/13, էջ 9:

քննադատության ենթարկելու հատկանիշներով գտնվում է ազատ խոսքի պաշտպանության տակ (Vereinigund Buildender Kunstler-ն ընդդեմ Ավստրիայի, թիվ 68354/01, 25/01/2007թ., § 33): Հետևաբար, խնդրո առարկա հարցը ոչ թե այն է, թե արդյոք լուսանկարը ինքնին, միջավայրից դուրս վիրավորական էր, թե ոչ, այլ այն, թե արդյոք հեղինակին հաջողվե՞լ է իր խոսքը ողջամտորեն փոխհավասարակշռել այլոց իրավունքների՝ տվյալ դեպքում քննադատության թիրախ անձնավորության արժանապատվության հարգման իրավունքի հետ»:

## 2.2. Երեք նախապայման

Արտահայտությունը վիրավորական համարվելու համար անհրաժեշտ է ցույց տալ երեք նախապայմանի առկայություն: Դրանք են.

1) արտահայտությունը պետք է կատարված լինի **հրապարակային** եղանակով,
2) արտահայտությունը պետք է լինի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը **արատավորող**,
3) արտահայտությունը պետք է կատարված լինի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով, դիտավորությամբ:

Նշված պայմաններից որևէ մեկի բացակայությունը բացառում է վիրավորանքի առկայությունը:

- ***Հրապարակային արտահայտություն***
  Տե՛ս վերևում:

- **Արատավորող արտահայտություն**
  Տե՛ս վերևում:

- **Նպատակի, դիտավորության առկայություն**

Ի տարբերություն զրպարտության, վիրավորանքի համար անհրաժեշտ է ցույց տալ դիտավորության առկայություն:

Դիտավորության առկայությունը հիմնավորվում է միայն փաստերով՝ առաջին հերթին անձի կոնկրետ **գործողություններով** կամ **հայտարարություններով**, որոնք նախորդել կամ հաջորդել են վիճահարույց հրապարակմանը: Որպես ուղեցույց, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի փաստերի վրա, որոնք ցույց են տալիս, որ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար, կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու հանգամանքի մասին[46]:

Ըստ Վճռաբեկ դատարանի.

*«դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին,*

---

[46] Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2293/02/10 որոշման 8-րդ էջի 2-րդ կետ:

*իր կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյոք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորել որևէ մեկին, թե օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում»*[47]:

*«Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի* գործով դատարանը ուշադրություն դարձրեց այնպիսի հանգամանքի վրա, որ հայցվորը մինչև դատարան դիմելը հերքման պահանջով դիմել էր լրատվամիջոցին ու լրագրողին, մինչդեռ վերջինս ԶԼ մասին օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով մեկշաբաթյա ժամկետում իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը հայտնելու փոխարեն նախընտրել էր հրապարակել ևս մեկ հոդված, որում կոպիտ քննադատության էր ենթարկել հայցվորին, այդ թվում նաև՝ նրա կողմից հերքման պահանջ ներկայացնելու հանգամանքը: Սույն փաստը դատարանի կողմից գնահատվեց որպես «անհանդուրժողական վարքագիծ» դրսևորելու հանգամանք, որի հիման վրա էլ որոշեց, որ լրատվամիջոցը միտում է ունեցել արատավորել Գլենդել Հիլզ ՓԲԸ ընկերության համբավը:

Վերը նշված օրինակին անդրադարձել է նաև Տեղեկատվական վեճերի խորհուրդը (այսուհետ՝ ՏՎԽ) իր թիվ 12 եզրակացության մեջ:

# 3. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

## 3.1. Ստույգ փաստ կամ հայտարարության ճշմարտացիություն

Անձն ազատվում է *զրպարտության*[48] և վիրավորանքի[49] համար պատասխանատվությունից, եթե իր կողմից հրապարակայնորեն կատարված արատավորող բնույթի հայտարարությունը հիմնված է ստույգ փաստերի վրա:

«Ստույգ փաստեր» եզրույթը մեկնաբանվում է որպես փաստեր, որոնք հիմնավորված են ապացույցներով՝ **տեղեկատվության հրապարակման պահին:**

Ստույգ փաստեր են նաև հանրահայտ փաստերը, որոնք ապացուցման անհրաժեշտություն չունեն[50]:

«Ստույգ փաստեր» եզրույթը կիրառելի է նաև 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի դրույթի նկատմամբ, որի մեկնաբանությունը տրված է ստորև:

## 3.2. Գնահատողական դատողություն

Գնահատողական դատողություն (նաև «գնահատական-դատողություն» կամ «գնահատող դատողություն») հասկացությունը սահմանված չէ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածում կամ որևէ այլ օրենսդրական ակտում: Այդուհանդերձ, այս հասկացությունը և դրանով սահմանված պաշտպանական համակարգը լայնորեն կիրառվում է դատարանների կողմից, և դա անելիս դատարանները վկայակոչում են

---

[47] Նույն որոշումը, էջ 10, պարբ. 3:

[48] Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 3-րդ մաս:

[49] Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերություն:

[50] Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով որոշում էջ 10, պարբ. 2:

Սահմանադրական դատարանի ՍԴՈ-997 որոշումը, ՄԻԵԴ նախադեպային իրավունքը[51] և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը[52]:

«Գնահատող դատողությունը» իր էությամբ կարծիք է, ենթադրություն, որևէ իրի կամ երևույթի տրված սուբյեկտիվ գնահատական: Այս հասկացության մեկնաբանությունը տրված է Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/2293/02/10 գործով որոշման[53], առաջին ատյանի դատարանի ԵԿԴ/2050/02/12 գործով վճռի և ՏՎԽ թիվ 36 որոշման մեջ[54]: Այս իմաստով գնահատական-դատողությունը «փաստացի հայտարարության» հակապատկերն է: Դատարանը չի կարող գնահատական-դատողությունը համարել փաստացի հայտարարություն կամ հակառակը: Դատավարության նախապատրաստական փուլում հստակ տարանջատում պետք է կատարվի գնահատական դատողությունների և փաստացի հայտարարությունների միջև, քանի որ իրավական պաշտպանության եղանակները այս երկուսի դեպքում էապես տարբեր են (տես՝ Ապացուցման բեռի բաշխման բաժինը):

Գնահատական-դատողությունը պաշտպանվում է Սահմանադրության 27-րդ հոդվածով («Յուրաքանչյուր ոք ունի իր *կարծիքն* ազատ արտահայտելու իրավունք»):

Գնահատական-դատողությունը, որպես կանոն, չի մտնում «զրպարտություն» հասկացության մեջ, քանի որ վերջինս տարածվում է միայն փաստի մասին հայտարարությունների վրա: Հետևաբար, ***գնահատողական դատողության վրա տարածվում է միայն «վիրավորանք» հասկացությունը:***

Գնահատողական դատողությունը ենթակա չէ ապացուցման: Դատարանը չի կարող դատավարության կողմի համար սահմանել գնահատողական դատողության ապացուցման բեռ: Նման պահանջը կլինի անիրավաչափ:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպությունն ընդդեմ «Զարուհի հրատարակչական տուն» ՍՊԸ-ի թիվ ԵԱՔԴ/0642/02/12 քաղաքացիական գործով դատարանը հայցվորից պահանջել էր ապացուցել «տուն քանդողներ» արտահայտության ճշմարտացիությունը, իսկ այնուհետև վճռում եզրակացրել, որ հոդվածի հեղինակը *«չի նշել և դատարանում էլ չկարողացավ նշել որևէ փաստ, որ հայցվորի անմիջական գործունեության հետևանքով քանդվել է գոնե մեկ ընտանիք»:* Մինչդեռ դատարանը պետք է հաշվի առներ, որ նշված արտահայտությամբ հեղինակը որակական գնահատական էր տվել ընկերության գործունեությանը, այլ ոչ թե կոնկրետ փաստի՝ տուն քանդելու մասին: Դա կարծիք էր, անձի սուբյեկտիվ տպավորության հիման վրա հնչեցված գնահատական, որը որպես այդպիսին ենթակա չէ ապացուցման: Նման դեպքերում ապացուցման բեռ սահմանելը համարվում է ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ սահմանափակում: Հետևաբար, թերևս, պետք էր այս արտահայտությունը քննել «վիրավորանք», այլ ոչ թե «զրպարտություն» եզրույթի ներքո:

---

[51] Օրինակ, *Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 17488/90, 27/03/1996: Տե՛ս ռուսերեն տեքստը:

[52] Օրինակ, Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով որոշումը կամ Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով որոշումը:

[53] Նույն որոշումը, էջ 9, պարբ. 3:

[54] *Արման Դարբինյանն ընդդեմ Քաղաքական հետազոտությունների կենտրոն ՍՊԸ-ի*, թիվ ԵԿԴ/2050/02/12 քաղաքացական գործով դատարանի որոշում, էջ 24:

Գնահատողական դատողության՝ ապացուցման ոչ ենթակա լինելու հանգամանքին անդրադարձել է ՍԴ-ն իր ՍԴՈ-997 որոշման մեջ[55]: ՏՎԽ-ն գնահատող դատողության և դրա ապացուցման ոչ ենթակա լինելու հանգամանքին անդրադարձել է իր թիվ 2 եզրակացության մեջ:

Այդուհանդերձ, գնահատողական դատողության եղանակով կարծիք հայտնելու ազատությունը բացարձակ չէ: Անհրաժեշտ է ցույց տալ, որ գնահատողական դատողության հիմքում ընկած են որոշ փաստական հիմքեր: Բացարձակապես որևէ փաստական հիմքերից զուրկ գնահատողական դատողությունը կհամարվի անհրավաչափ և կարձանագրվի խախտում[56]: Այս երևույթին անդրադարձել է Տեղեկատվական վեճերի խորհուրդը *Տիգրան Ուրիխանյանն ընդդեմ Էդգար Բաբսեղյանի* դատական գործի վերաբերյալ իր թիվ 31 եզրակացությունում: Տես նաև Վճռաբեկ դատարանի եզրահանգումը թիվ ԵԿԴ/2293/02/10 գործով[57]:

## 3.3. Քննադատական խոսքի թույլատրելի շրջանակները

Ազատ խոսքի պաշտպանությունը Սահմանադրության 27-րդ հոդվածի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիմքերով տարածվում է ոչ միայն այնպիսի «տեղեկատվության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք ընդունվում են բարեհաճությամբ կամ համարվում են անվտանգ ու չեզոք, այլ նաև նրանց, որոնք կարող են **վիրավորել**, **ցնցել** կամ **անհանգստություն** պատճառել անձանց: Այդ շրջանակներն առավել լայն են լրագրողների առումով, ըստ որի՝ լրագրողական ազատությունը ներառում է որոշակի աստիճանի չափազանցության և նույնիսկ **սադրանքի** դիմելու հնարավորություն, և այդ իմաստով Կոնվենցիայի 10-րդ հոդվածը պաշտպանում է ոչ միայն տեղեկությունների և գաղափարների բովանդակային մասը, այլ նաև դրանց մատուցման եղանակը[58]:

Վերը նշված պայմանն առավել արդյունավետ գործում է այն դեպքում, երբ հրապարակային հայտարարությունը շոշափում է հանրային գերակա շահ (տե՛ս «Գերակա հանրային շահ» ենթաբաժինը):

Ազատ խոսքի պաշտպանությունը բացարձակապես, առանց որևէ բացառության չի տարածվում ատելության խոսքի վրա: Բացի այդ, նման խոսքը քրեորեն հետապնդելի արարք է ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով: Ինչ վերաբերում է ցեղասպանությունը հերքելուն, որը մինչև վերջերս ներառվում էր ատելության խոսքի շրջանակներում, թեև ՀՀ քրեական օրենսգրքի 397¹ հոդվածի ուժով նման արարքը շարունակում է համարվել հանցագործություն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի* վճռով (17.12.2013թ.) սահմանվեց, որ ցեղասպանությունը հրապարակայնորեն մերժելու համար անձին քրեական հետապնդման ենթարկելն ու դատապարտելը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված ազատ արտահայտվելու իրավունքի անհրավաչափ միջամտություն է[59]:

---

[55] Էջ 33, պարբ. 2:

[56] Նույն տեղում:

[57] Էջ 10, պարբ. 2-ում:

[58] *Պրագերն ու Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի*, թիվ 15974/90, 26/04/1995, ՄԻԵԴ, § 38: Տե՛ս նաև *Հայկ Բաբուխանյանի* գործով ԵԿԴ/0790/02/11 որոշումը, էջ 30:

[59] Գործը գտնվում է Մեծ պալատում և դեռևս վճիռն օրինական ուժի մեջ չի մտել:

ՏՎԽ-ն ատելության խոսքին անդրադարձել է իր թիվ 7 եզրակացության մեջ:

## 3.4. Գերակա հանրային շահ

«Գերակա հանրային շահ» պաշտպանական համակարգը հնարավորություն է տալիս խուսափել վիրավորանքի կամ զրպարտության համար նախատեսված պատասխանատվությունից, նույնիսկ եթե վիրավորանքի և զրպարտության առկայության համար բոլոր սահմանված նախապայմաններն առկա են:

«Գերակա հանրային շահ» սկզբունքն ամրագրված է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի երկու դրույթներում. *Վիրավորանքի* մասով հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ «*հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով»: Զրպարտության* մասով հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացնելը չի համարվի զրպարտություն, եթե այդ փաստացի տվյալները *«տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի…»* - այնուհետև սահմանված է «ողջամիտ հրապարակման» սկզբունքը:

Այսինքն, վիրավորանքի համար անձը պատասխանատվություն չի կրի, եթե հիմնավորի հանրային գերակա շահի առկայություն, իսկ զրպարտության համար պատասխանատվություն չի կրի, եթե հիմնավորի հանրային գերակա շահի առկայությունը «ողջամիտ հրապարակում» պաշտպանական համակարգի հետ միասին (տես՝ Ապացուցման բեռի բաշխման բաժինը):

Այս ամենից հետո կարևոր է հասկանալը, թե ի՞նչ է նշանակում «Գերակա հանրային շահ» արտահայտությունը:

- ***Հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն***

«Հանրային գերակա շահ» եզրույթը մեկնաբանվել է Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2293/02/10 գործով նախադեպում, ըստ որի՝ հանրային գերակա շահը պայմանավորված է, նախ և առաջ, տվյալ հանգամանքների ներքո **հասարակության տեղեկացված լինելու** իրավունքի առկայությամբ: Եթե տվյալ տեղեկատվությունը ներկայացնում է հասարակական հետաքրքրություն, և հնարավոր է ցույց տալ, որ տվյալ տեղեկատվությունը զգալիորեն անհրաժեշտ է հանրությանը, ինչպես նաև, որ հանրությունը շարունակաբար հետևել է այդ տեղեկությունների տարածման ընթացքին և սպասել դրանց հետագա հրապարակմանը, ապա առկա է հանրային շահ տվյալ տեղեկատվության տարածման ու հանրության կողմից դրա ստացման առնչությամբ, և այդ դեպքում ընդհանուրի այդ շահը կարող է գերակայել մասնավորի շահին[60]:

Տեղեկատվական վեճերի խորհուրդը այս եզրույթի մասին արտահայտել է կարծիք *Գլենդել հիլզ ՓԲԸ-ն ընդդեմ Սկիզբ մեդիա կենտրոն ՍՊԸ*-ի գործով իր թիվ 12 եզրակացության մեջ, որտեղ գործի փաստերը համապատասխանում են վերը նշված չափանիշներով պայմանավորված իրավիճակին:

[60] Տե՛ս էջ 10, պարբ. 2:

- **Հանրային բաց բանավեճ**

Ընդհանուր հասարակական հետաքրքրություն ներկայացնող ցանկացած տեղեկատվություն, որը կոչված է խթանել այդ հարցի շուրջ հանրային բաց բանավեճ կամ լրացնում է արդեն ընթացքի մեջ գտնվող նման բանավեճի ծավալմանը, ինքնին հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն է և մտնում է ազատ խոսքի հատուկ պաշտպանության տակ: Սահմանադրական դատարանը իր ՍԴՈ-997 որոշման մեջ եզրահանգել է, որ բոլոր այն դեպքերում, երբ լրագրողը (կամ որևէ այլ անձ) իր հայտարարություններով դուրս է գալիս հանրային բաց բանավեճի շրջանակներից և դա անում է այնպես, որ հնարավոր չէ այլևս փաստարկել, որ հրապարակային արտահայտություններն ուղղված են *«հասարակության համար կարևոր հարցերի բաց հանրային քննարկմանը»*, այդ պահից արտահայտվելու նրա իրավունքը չի գերակայում տուժողի անհատական շահին: Այդ դեպքում նա դադարում է այլևս սպասարկել հանրային շահը, և հանրային իրավահարաբերությունն այդտեղ դադարում է[61]: Այս մոտեցումը ամրագրվել է նաև ՏՎԽ-ի թիվ 18 եզրակացության մեջ: Այսպիսով, խիստ կարևոր է հստակ ցույց տալ, թե արդյոք վիճահարույց հրապարակային հայտարարությունը (օրինակ՝ կոշտ քննադատությունը) կատարվել է հանրությանը հետաքրքրող հարցի շուրջ հանրային բաց բանավեճ ծավալելու կամ արդեն ծավալված բանավեճը լրացնելու նպատակով, թե՝ ոչ:

- **Հանրային հետաքրքրությո՞ւն, թե՞ հանրային հետաքրքրասիրություն**

Շատ կարևոր է նկատի ունենալ, որ տեղեկատվությունը իրապես, այլ ոչ թե ձևականորեն պետք է ներկայացնի հասարակական **հետաքրքրություն**: Ցավոք, ընթերցողի նեղ **մարդկային հետաքրքրասիրությունը** կամ հասարակության հետաքրքրասիրությունը որևէ երևույթի կամ անձի նկատմամբ երբեմն սխալմամբ ներկայացվում է որպես հասարակական հետաքրքրության առարկա: Անհրաժեշտ է հստակ տարբերակել հասարակության հետաքրքրասիրության բավարարմանն ուղղված տեղեկատվությունը այն տեղեկատվությունից, որն ուղղված է խթանելու ընդհանուր հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ հանրային բաց բանավեճ կամ լրացնելու արդեն ընթացքի մեջ գտնվող նման բանավեճը[62]:

- **Քաղաքական խոսք և քաղաքական գործիչներ**

Քաղաքական բանավեճերի[63] ազատությունը ցանկացած ժողովրդավարության հիմքն է: Այդ իմաստով քաղաքական խոսքը գտնվում է հատուկ պաշտպանության տակ: Հետևաբար, եթե հրապարակված խոսքը կամ լրատվական նյութը վերաբերում է քաղաքական իրադարձություններին, ապա թույլատրելի քննադատության շրջանակները շատ ավելի լայն են:

Նմանապես, թույլատրելի քննադատության շրջանակները շատ ավելի լայն են քաղաքական գործիչների, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն

---

[61] Էջ 17, պարբ. 1:

[62] *Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի* (2), թիվ 40660/08 և 60641/08, 07/02/2012, § 33, 47, 38, 85, 103, 110 և 114: Տե՛ս նաև *Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի,* թիվ 59320/00, 24/06/2004, § 65 (ռուսերեն)

[63] *Օզգյուրյուքն Վե Դայանիշման Փարթիսի (ՕԴՓ) ընդդեմ Թուրքիայի, թիվ 7819/03,* 10/05/2012, § 28:

վերջինիս, քաղաքական գործիչների արարքները և որոշումները ենթական են հանրային վերահսկողության և բաց են հանրության կողմից քննարկման համար։ Հենց այս իմաստով, նրանք պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան, քան սովորական քաղաքացիները։ ՏՎԽ-ն վերը նշված երկու սկզբունքներին անդրադարձել է իր մի շարք որոշումներում, մասնավորապես՝ թիվ 3 մեջ և թիվ 4 եզրակացությունների մեջ։ Ներպետական դատարանները նույնպես մի շարք դատական գործերով կիրառել են վերը նշված սկզբունքները[64]։

## 3.5. Ողջամիտ հրապարակում

Այս սկզբունքը գործում է լրագրողների առնչությամբ, սակայն չի բացառվում, որ դրանից կարող է օգտվել նաև ցանկացած մարդ, ով անզգուշորեն կատարել է մի հրապարակային հայտարարություն, որն այնուհետև պարզվել է, որ ներառում է վիրավորական կամ զրպարտող բնույթի խոսք։

Այս սկզբունքը, փաստորեն, թույլ է տալիս լրագրողին սխալվել, սակայն խուսափել պատասխանատվությունից, եթե վերջինս հիմնավորի, առաջին, որ գործել է բարեխղճությամբ և լրագրողական վարքագծի նորմերի պահպանմամբ, երկրորդ, ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն տրամադրելու նպատակով։

Ըստ մեկ այլ մեկնաբանության՝ «ողջամիտ հրապարակում» պաշտպանությունը գործում է, եթե հիմնավորվում է, որ ցանկացած այլ անձ լրագրողի փոխարեն և ցանկացած այլ հանգամանքներում տվյալ լրատվանյութը կտարածեր նույն կերպ, ինչպես դա արել է տվյալ լրագրողը[65]։

Այս սկզբունքը (միայն զրպարտության մասով) ամրագրված է 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում, համաձայն որի՝ անձն ազատվում է զրպարտության համար պատասխանատվությունից, եթե հիմնավորի, որ բացի նրանից, որ տվյալ տեղեկատվությունը իր բովանդակությամբ պայմանավորված էր հանրային գերակա շահով (առաջին պայմանը՝ տե՛ս վերևում), ողջամտության սահմաններում ձեռնարկել էր միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը (երկրորդ պայմանը), ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները (երրորդ պայմանը)։

Տեղեկության ճշմարտացիությունը ստուգելու պահանջի կատարված լինելը պետք է գնահատվի հրապարակման պահի դրությամբ։ Եթե հետագայում (օրինակ՝ դատարանում) պարզվի, որ տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը, մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ լրագրողը ողջամտության շրջանակներում ձեռնարկել էր բոլոր հնարավոր միջոցները տեղեկատվության ճշմարտացիությունը ստուգելու համար, այդ փաստը չի կարող պատասխանատվության հիմք լինել։ Ինչպես նշել է ՏՎԽ-ն իր *Նվեր Պողոսյանն ընդդեմ «Ժողովուրդ թերթի խմբագրություն»* ՍՊԸ-ի գործով եզրակացության մեջ՝ *«տեղեկատվությունը ստուգելու պահանջի [կատարումը] պետք է գնահատել այդ տեղեկությունը ստանալու պահին տիրող իրավիճակի ներքո, այլ ոչ թե հետին հայացքով»*։

Վերը նկարագրված սկզբունքները, ընդհանուր առմամբ, բխում են ՄԻԵԴ նախադեպային իրավունքից և կոչված են պաշտպանելու լրագրողական ազատությունը այն

---

[64] Տե՛ս, օրինակ, թիվ ԵԿԴ/0790/02/11 դատական գործը Հայկ Բաբուխանյանն ընդդեմ Խմբագիր ՍՊԸ-ի գործով, էջ 35։

[65] «Զրպարտության Սահմանումը» Արտիկլ 19 հասարակական կազմակերպություն, հուլիս 2000, սկզբունք 9։

դեպքերում, երբ տեղեկության հրատապությունը պահանջում է, որքան հնարավոր է արագ տարածել դա, և հապաղումը կարող է նվազեցնել լրատվանյութի հրատապությունը: Նման պայմաններում նույնիսկ փորձված լրագրողը կարող է սխալվել, սակայն դա չի նշանակում, որ պետք է շտապել պատասխանատվության ենթարկել լրագրողին՝ նույնիսկ, եթե տվյալ հանգամանքների ներքո նա ամեն ինչ արել էր տեղեկատվության ճշգրտությունը ստուգելու նպատակով:

Սահմանադրական դատարանը նույնպես անդրադարձել է նշված սկզբունքին իր ՍԴՈ-997 որոշման մեջ[66], հստակորեն առանձնացնելով երկու պայմաններ. **բարեխղճությունը** և տուժողի հեղինակությանն ու պատվին վնաս պատճառելու **դիտավորության** բացակայությանը: ՏՎԽ-ն այս սկզբունքին անդրադարձել է իր թիվ 4 որոշման և վերը վկայակոչված եզրակացության մեջ:

## 3.6. Մինչդատական կամ դատական վարույթներում կատարված հրապարակային արտահայտություններ

Անձն ազատվում է զրպարտության համար պատասխանատվությունից նաև այն դեպքում, եթե վիճահարույց արտահայտությունը տեղ է գտել մինչդատական վարույթի ընթացքում (օրինակ, քրեական գործով նախաքննության ընթացքում) կամ դատական քննության ընթացքում (օրինակ, դատարանի դահլիճում հրապարակայնորեն ասված խոսք): Այս սկզբունքը ամրագրված է 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում:

Նույն պայմանները վերաբերում են նաև այնպիսի արտահայտություններին, որոնք տեղ են գտել մինչդատական կամ դատական փուլում ներկայացված ապացույցներում (օրինակ, վկայի գրավոր ցուցմունքում, փորձագետի եզրակացությունում կամ որևէ տեսաերիզում):

Վերը նշված պայմանները հավասարապես կիրառելի են քրեական, քաղաքացիական և վարչական դատավարությունների նկատմամբ[67]:

## 3.7. Հրապարակային ելույթից, պատասխանից կամ դրանց հիման վրա կազմված փաստաթղթերից բխող արտահայտություններ

Եթե անձի հրապարակային արտահայտությունները մեկ այլ անձի մասին **բխում** են վերջինիս կողմից իր հրապարակային ելույթում, պատասխանում կամ նրանից ելնող փաստաթղթում հնչեցրած մտքերից, հրապարակային արտահայտություն կատարողը ազատվում է զրպարտության համար պատասխանատվությունից: Այս սկզբունքը նման է վերևում նշված «Ստույգ փաստ կամ հայտարարության ճշմարտացիություն» պաշտպանական համակարգին:

**«Բխել»** բայը մեկնաբանում է *որպես «հրապարակային ելույթում կամ պատասխանում կամ փաստաթղթում տեղ գտած եզրահանգումների կամ փաստերի բարեխիղճ շարադրանք»*[68]:

**«Փաստաթուղթ»** հասկացությունը մեկնաբանվում է լայնորեն՝ ներառելով կրիչի ցանկացած տեսակի օգտագործմամբ կատարված գրառումներ՝ էլեկտրոնային հաղորդագրման ցանկացած տեսակ, լուսապատճեն և այլն[69]:

---

66 Տե՛ս բաժին 7:

67 Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/2293/02/10 որոշում, էջ 12, պարբ. 2:

68 Նույն վճռում, էջ 15, պարբ. 3:

**«Ելույթ»** հասկացությունը մեկնաբանվում է որպես հնչեցրած բանավոր խոսք, որը նպատակ ունի որոշակի տեղեկատվություն հասու դարձնել անորոշ թվով անձանց և արվում է այնպիսի հրապարակային միջոցառումների ժամանակ, ինչպիսին են, օրինակ, կոնֆերանսները, համաժողովները, հավաքները, հանրահավաքները, և այլն[70]:

Տե՛ս ՏՎԽ թիվ 25 եզրակացությունը, որում Խորհուրդը որոշել է, որ լրագրողի կողմից հոդվածում օգտագործված սուր և նույնիսկ արատավորող բնույթի արտահայտությունները մեկ այլ անձի վերաբերյալ բխում էին վերջինիս հրապարակային ելույթներից ու գործողություններից:

## 3.8. Տեղեկատվության վերարտադրում

Անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար նախատեսվող պատասխանատվությունից, եթե բառացիորեն կամ բարեխղճորեն վերարտադրել է (արտատպել է) այլ աղբյուրի հեղինակած հայտարարությունը և դա անելիս նշել է աղբյուրի մասին: Այս սկզբունքը սահմանված է 1087.1-րդ-րդ հոդվածի 6-րդ մասում:

Վերը նշվածի առումով կարևոր է ուշադրություն դարձնել երկու հանգամանքի վրա: Առաջին, թե ինչ է նշանակում «աղբյուր» հասկացությունը, երկրորդ, ինչ է նշանակում «բարեխղճորեն» արտահայտությունը:

- **Տեղեկատվության աղբյուր**

Վճռաբեկ դատարանը իր թիվ ԵԿԴ/2293/02/10 և թիվ ԼԴ/0749/02/10 որոշումներում մանրամասնորեն մեկնաբանել է տեղեկատվության աղբյուր հասկացությունը: Ըստ այդ մեկնաբանության՝ տեղեկատվության աղբյուր են.

– **հեղինակները** և **լրատվական գործակալությունները**,
– որոնք **ֆիզիկական** կամ **իրավաբանական** անձինք են,
– որոնք հրապարակում են տեղեկատվություն որոշակի **միջոցներով**:[71]

Վերը նշվածով Վճռաբեկ դատարանը առաջ է քաշել «աղբյուրի» լեգիտիմության գաղափարը, ըստ որի՝ բոլոր այն վկայակոչված աղբյուրները, որոնք չեն համապատասխանում վերը նշված պայմաններին, չեն կարող համարվել լեգիտիմ աղբյուրներ:

«Հեղինակը» պետք է լինի կոնկրետ ու իրական ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Այնպիսի վերացական արտահայտություններ, ինչպիսին են, օրինակ, «շրջանառվող լուրերը», չեն կարող համարվել տեղեկատվության լեգիտիմ աղբյուր: Անանուն կամ կեղծ տվյալներով ֆիզիկական կամ իրավաբանական անձինք նույնպես լեգիտիմ «աղբյուր» չեն: Օրինակ, այդպիսիք են սոցիալական ցանցերում կամ, ընդհանրապես, ինտերնետ տիրույթում գործող անանուն օգտատերերը:

Օրինակ, «Չենք լռելու» նախաձեռնությունը, որը գոյություն ունի նաև www.facebook.com սոցիալական ցանցում, իր էջի օգտատիրոջ անհատական տվյալների բաժնում նշում է, որ «Չենք լռելու» նախաձեռնությունը ստեղծվել է Հայաստանի ապազգային մտահոգ մի խումբ

---

[69] Նույն վճռում, էջ 15, պարբ. 4:

[70] Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/2293/02/10 որոշում, էջ 12, պարբ. 5:

[71] Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/2293/02/10 որոշում, էջ 14, տե՛ս վերջին էջը և հաջորդ էջի սկիզբը:

երիտասարդների կողմից: Մինչդեռ, անանուն եղանակով գրանցվելը հակասում է նաև Facebook-ի «Իրավունքներ և պարտականություններ» կանոնակարգի 4-րդ կետին, որը սահմանում է, որ *«Ֆեյսբուքի օգտատերերը պետք է նշեն իրենց իրական անուններն ու ազգանունները, և մեզ անհրաժեշտ է ձեր օգնությունը այդ պայմանը պահելու համար…դուք [պարտավորվում եք] Ֆեյսբուքում չտրամադրել որևէ կեղծ անձնական տեղեկություն, կամ առանց թույլտվության հաշիվ բացել որևէ այլ անձնավորության համար»*: Ֆեյսբուքի կանոնակարգի այս կետը, փաստորեն, համահունչ է Վճռաբեկ դատարանի «հեղինակ» հասկացության մեկնաբանության հետ:

Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ տեղեկատվության աղբյուրը կամ հեղինակը հանդես է գալիս անանուն կամ կեղծ անհատական տվյալներով, դատավարության սուբյեկտը, այսինքն՝ պատասխանատվության կրողը դառնում է այդ տեղեկատվություն «տարածողը» (այլ կերպ՝ հրապարակողը, արտատպողը կամ վերարտադրողը):

Այս սկզբունքը ամրագրված է նաև 1087.1-րդ հոդվածի 9-րդ կետում, համաձայն որի՝ զրպարտության կամ վիրավորանքի համար պատասխանատվություն կրում է հրատարակողը, եթե «տեղեկատվության աղբուրը (հեղինակը) հայտնի չէ»:

Նշվածը հաստատել է նաև Վճռաբեկ դատարանը, որը բառացիորեն սահմանել է հետևյալը.

> *«…հրապարակող անձը չի ազատվում պատասխանատվությունից … նաև այն դեպքում. երբ … թեև վերարտադրում է տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ շարադրանքը, այդուհանդերձ հղում է կատարում մի աղբյուրի, որը չի համարվում «տեղեկատվության աղբյուր» ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ-րդ հոդվածի իմաստով, այն է՝ չի հանդիսանում հեղինակ կամ լրատվական գործակալություն … [նման դեպքում] տեղեկատվություն հրապարակողն ինքն է համարվում զրպարտող կամ վիրավորող »*[72]:

- **Աղբյուրին հղում կատարելը հրապարակման պահին**

1087.1-րդ հոդվածի 9-րդ կետի առաջին նախադասության համաձայն, աղբյուրին պետք է հղում կատարել հրապարակելու պահին: Սա հաստատում է նաև Վճռաբեկ դատարանը՝ բառացիորեն սահմանելով, որ *«բովանդակային առումով տեղեկատվության աղբյուրի բացահայտումը պետք է կատարվի տեղեկատվությունը տարածելու հետ միաժամանակ»*[73]: Տե՛ս նաև ՏՎԽ թիվ 6 որոշումը:

Դատարանը աղբյուրը հրապարակման պահին վկայակոչելու պահանջը բացատրում է այն անհրաժեշտությամբ, որ տեղեկատվության հասցեատերը պետք է տեղեկության տարածման պահին իմանա տեղեկության աղբյուրի մասին, որը կարող է լինել ոչ թե անմիջական հրապարակողը, այլ որևէ այլ սուբյեկտ[74]:

Եթե հրապարակման պահին հղում չի կատարվում աղբյուրին, 1087.1-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն զրպարտության կամ վիրավորանքի համար պատասխանատվությունը կրում է հրապարակողը՝ ինչպես անանուն կամ կեղծ աղբյուրների դեպքում: Նույնիսկ, եթե հրապարակողը հետագայում, օրինակ, դատական քննության փուլում որոշում է բացահայտել իր աղբյուրը, սա հրապարակողին չի ազատում պատասխանատվությունից:

---

72 ԵԿԴ/2293/02/10 որոշում, էջ 15, 2-րդ երկրորդ պարբ.:

73 ԵԿԴ/2293/02/10 որոշում , էջ 15, 5-րդ պարբ.:

74 Նույն տեղում:

- **Աղբյուրը չբացահայտելը**

Աղբյուրը չբացահայտելը հրապարակողի իրավունքն է: Այդուհանդերձ, հրապարակողը պետք է նկատի ունենա, որ եթե հրապարակելու պահին որոշում է օգտվել աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, պատասխանատվության բեռը վերցնում է իր վրա: Այս սկզբունքը նույնպես ամրագրված է 1087.1-րդ հոդվածի 9-րդ կետում:

Ինչպես նշվեց վերևում, եթե հրապարակողը հետագայում (օրինակ՝ դատարանում) որոշում է բացահայտել իր աղբյուրը, սա նրան չի ազատում պատասխանատվությունից, քանի որ աղբյուրի վկայակոչումը պետք է կատարել հրապարակման պահին:

- **Տեղեկատվության տրամադրման «միջոց» հասկացությունը**

«Աղբյուրը» ոչ միայն պետք է լինի իրական, այլ նաև պետք է տեղեկությունը տրամադրի կոնկրետ եղանակով՝ «միջոցներով»:

«Միջոցներ» արտահայտությունը լայն է մեկնաբանվում և ընդգրկում է հրապարակային ելույթներ, պաշտոնական փաստաթղթեր, հեղինակային ստեղծագործություններ, նկարներ, ֆիլմեր, արվեստի այլ ստեղծագործություններ, հեռարձակման բոլոր միջոցները և էլեկտրոնային տեղեկատվական համակարգերը, և այլն: Այս ցուցակը սպառիչ չէ[75]:

- **Բառացի կամ բարեխիղճ վերարտադրություն**

Այս պահանջը նշանակում է, որ տեղեկությունը պետք է շարադրվի կամ **բառացի** կերպով կամ այնպես, որպեսզի չփոխվի ինչպես տեղեկության **ամբողջական իմաստը**, այնպես էլ կոնկրետ փաստերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը[76]:

Եթե տեղեկատվության վերարտադրումը չի կատարվել բառացի կամ բարեխիղճ կերպով, այլ կերպ՝ հրապարակողը փոփոխություններ է մտցրել տեղեկատվության մեջ, ավելացրել է, հանել կամ փոփոխել փաստերը (շարադրանքը կամ դրա առանձին մասերը), ապա վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվություն է կրում հրապարակողը (վերարտադրողը)՝ ինչպես վերևում նշված այն դեպքում, երբ հրապարակողը հղում է կատարում անանուն աղբյուրի վրա:

- **Դիտավորության առկայությունը**

Նույնիսկ, եթե տեղեկատվություն հրապարակողը տեղեկատվության բովանդակությունը հրապարակել է բառացիորեն կամ բարեխղճորեն և դա անելիս պատշաճ կերպով հղում է կատարել աղբյուրին և աղբյուրն էլ լեգիտիմ է, հրապարակողը կրում է պատասխանատվություն, եթե դատավարության ընթացքում ապացուցվում է, որ հրապարակողը գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ զրպարտություն լինելու մասին:

Նման դեպքում ոչ տեղեկատվության աղբյուրի լեգիտիմ լինելը և ոչ էլ տեղեկատվության վերարտադրումը բարեխղճորեն կատարած լինելը հրապարակողին չեն ազատում պատասխանատվությունից, քանի որ վերջինիս մոտ առկա է զրպարտելու դիտավորությունը:

---

[75] ԵԿԴ/2293/02/10 որոշում , էջ 15, 1-ին պարբ.:

[76] ԵԿԴ/2293/02/10 որոշում , էջ 14, նախավերջին պարբ.:

Այդ դեպքում ինչպես տեղեկատվության լեգիտիմ աղբյուրը, այնպես էլ բարեխիղճ հրապարակողը կրում են համապարտ պատասխանատվություն[77]:

Սթիլն ու Մորիսը ընդդեմ Միացյալ Թագավորության գործով դիմողները տպագրել և տարածել էին տեղեկատվական թերթիկներ, որոնք պարունակում էին մի շարք հայտարարություններ McDonald's-ի վերաբերյալ: Նշվում էր, օրինակ, որ այս ընկերությունը պատասխանատու է երրորդ երկրներում ծագած սովի համար կամ փոքր տնտեսություն ունեցող ֆերմերներին իրենց հողերից կամ բնիկների ցեղախմբերին արևադարձային անտառներից վտարելու համար: Հնչեցրած մեղադրանքներից մի քանիսն էլ վերաբերում էին McDonald's-ի կողմից արտադրվող սննդի անորակությանը և այն ուտելու արդյունքում առողջությանը սպառնացող վտանգներին: Ներպետական դատարաններում դիմողները հրապարակումը «ստույգ փաստի» հիման վրա կատարված լինելը ապացուցելու համար հղում էին կատարել հանրային տեղեկատվության տիրույթում գտնվող աղբյուրների, սակայն ներպետական վերաքննիչ դատարանը դրանք գնահատել էր ոչ «ստույգ»: Եվրոպական դատարանը համաձայնել էր վերաքննիչ դատարանի հետ՝ գտնելով, որ այն փաստարկը, թե նյութն արդեն իսկ հանրային տիրույթում էր, համոզիչ չէր, քանի որ նշված նյութերը կամ չէին պաշտպանում թերթիկում առկա պնդումները, կամ դրանցում ևս հիմնավորման պակաս կար[78]: Այս հիմքով Դատարանն իրավաչափ համարեց դիմողների արտահայտվելու ազատության իրավունքին միջամտությունը. այստեղ կիրառված է՝ «գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին» սկզբունքը:

## 3.9. Այլոց քոմենթները

Եթե առցանց լրատվամիջոցը իր կայքում հրապարակել է մի հոդված, որի ներքո կայքի այցելուները կատարել են վիրավորական կամ զրպարտող բնույթի մեկնաբանություններ (քոմենթներ), լրատվամիջոցը պատասխանատվություն չի կրում այդ քոմենթների համար, եթե տուժողը մինչև դատարան դիմելը նախօրոք չի ծանուցել լրատվամիջոցին այդ քոմենթների համար և չի պահանջել դրանք հեռացնել կայքից:

Այս սկզբունքը այլ կերպ կոչվում է «Ծանուցել և հանել» (Notice and take down action) պաշտպանական համակարգ, որը լայնորեն կիրառվում է միջազգային իրավունքում և արևմտյան ժողովրդավարական պետություններում: ՀՀ-ում այս սկզբունքը սահմանված չէ օրենքում և ոչ էլ որևէ անդրադարձ է եղել այս մասին Վճռաբեկ դատարանի կամ Սահմանադրական դատարանի կողմից: Այդուհանդերձ, այս սկզբունքը կիրառվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին
ատյանի կողից թիվ ԵԿԴ/2491/02/11 գործով, որում դատարանը որոշեց, որ առանց լրատվամիջոցին նախօրոք ծանուցելու դատական կարգով նրանից այլոց քոմենթները հանելու պահանջ ներկայացնելը լրատվամիջոցի տեղեկատվություն տարածելու իրավունքի միջամտություն է, որն *«անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում»*[79]:

Այսինքն, «Ծանուցել և հանել» պաշտպանության համար ելակետային է **իրազեկված** լինելու հանգամանքը, որը առկա է, եթե լրատվամիջոցը ծանուցվել է: Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է, որ իրազեկված լինելու պայմանը կարող է բավարարված լինել

---

[77] ԵԿԴ/2293/02/10 որոշում, էջ 15, 4-րդ պարբ.:

[78] Steel-ը և Morris-ն ընդդեմ Միացյալ Թագավորության - 68416/01 վճիռ 15.2.2005թ, § 92:

[79] ԵԿԴ/2293/02/10 որոշում, էջ 31:

նաև, եթե հայցվորը հիմնավորի, որ լրատվամիջոցը բավարար չափով **վերահսկում** է իր պորտալում քոմենթների հոսքը, և երկրորդ պայմանի առկայությունը կանխորոշում է նաև առաջին պայմանը:

Եվրոպական դատարանը վերջերս Դելֆի-ի տեղեկատվական պորտալն ընդդեմ Էստոնիայի գործով որոշմամբ (գանգատ թիվ 64569/09) փոքր-ինչ մեղմեց այս մոտեցումը, շեշտը դնելով ոչ թե ծանուցված լինելու ֆորմալ պահանջի վրա, այլ թե արդյոք լրատվամիջոցը իրականում իրազեկ եղե՞լ է ակնհայտ վիրավորական կամ զրպարտող արտահայտությունների առկայության մասին, թե ոչ՝ անկախ ծանուցված լինելու հանգամանքից: Ըստ այդմ, եթե փաստերը ցույց են տալիս, որ մինչև ծանուցվելը լրատվամիջոցը գիտեր կամ տվյալ հանգամանքների ներքո չէր կարող իմացած չլինել իր պորտալում հայտնված վիրավորական կամ զրպարտող բնույթի քոմենթների մասին, լրատվամիջոցը կրում է պատասխանատվություն:

## 3.10. Գույքային վիճակ

Վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվության եղանակը և դրամական չափը որոշելիս դատարանները, որպես էական հանգամանք, պարտավոր են հաշվի առնել պատասխանողի գույքային վիճակը: Այս պահանջը ամրագրված է 1087.1-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետում:

Այս պահանջի նպատակն է համաչափության ընդհանուր սկզբունքի կիրառում ապահովելը, որպեսզի պատասխանողը անհարկի ծանր կամ անհաղթահարելի գույքային բեռի տակ չհայտնվի: Եթե պատասխանողը լրագրող է կամ լրատվամիջոց, դատարանները սահմանում են փոխհատուցման այնպիսի չափ, որպեսզի չխոչընդոտվի լրատվամիջոցի բնականոն աշխատանքը և, արդյունքում, տեղեկատվության բնականոն հոսքը, քանի որ վերջինս արդեն հանրային ընդհանուր շահ է ներկայացնում: Սովորական քաղաքացու առումով այս սկզբունքի կիրառումը պայմանավորված է քաղաքացուն անհարկի գույքային մեծ բեռի տակ դնելուց խուսափելու անհրաժեշտությամբ:

ՏԴ1/0177/01/11 գործով դատարանը հաշվի առավ պատասխանող ֆիզիկական անձի ցածր աշխատավարձը և վարձակալությամբ բնակվելու հանգամանքները, իսկ պատասխանող իրավաբանական անձի մասով՝ ընկերության վնասով աշխատելու և սնանկության եզրին գտնվելու հանգամանքները: Այս երկու հանգամանքները հաշվի առնելով՝ դատարանն ամբողջությամբ մերժեց հայցվորի դրամական փոխհատուցման պահանջը և սահմանեց, որ հնարավոր է հասնել հայցվոր ընկերության պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի վերականգնմանը ոչ նյութական եղանակով: Թիվ ԵԿԴ/0261/02/11 քաղաքացիական գործով դատարանը հաշվի առավ պատասխանող կողմի՝ «թերթի ոչ մեծ տպաքանակը», «թերթի արժեքը» և «տեղեկատվության տարածման շրջանակը»:

ԵԿԴ/2293/02/10 գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն առաջարկում է պատասխանողներից պահանջել նրանց եկամուտների վերաբերյալ պետական իրավասու մարմիններին ներկայացված ֆինանսական կամ այլ փաստաթղթեր, օրինակ, հարկային մարմիններին ներկայացված հարկային հաշվետվությունները: Պատասխանողի գույքային վիճակին անդրադառնալու պահանջի մեկնաբանությունները տրված են նաև Սահմանադրական դատարանի ՍԴՈ-997 և Վճռաբեկ դատարանի ԼԴ/0749/02/10 որոշումներում: